№ 183 ԵՐԵՔՇԱԲԹԻ, 21 ՕԳՈՍՏՈՍԻ

1912
ՔԱՌԱՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԵՐԵՔՇԱԲԹԻ, 21 ՕԳՈՍՏՈՍԻ № 183

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը
և 7 ամսվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Сергіевская ул., № 5
Tiflis, Rédaction „Mschak"

Խմբագրատան տելեֆոն № 2—53.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—3
(բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.

Տպարանի տելեֆոն № 67.

ՄՇԱԿ
ՔԱՌԱՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ".
TIFLIS, Rédaction du journal „MSHAK".

ՕԳՈՍՏՈՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ
ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ 5 ՌՈՒԲԼԻ.

Օգոստոսի 1-ից մինչև սեպտ. 1-ը 85 կ.։
Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն եւ 40 կ. նամականիշ. ՀԻՆ ՀԱՍՑԷՆ եւ 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ.

Յայտարարութիւնների համար պիտի վճարել. I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.։

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торгов. Дома Л. и Э. Метцль и К°, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Վիլնոյում՝ Большая, 38, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԱԶԳԻՍ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ հրամանով Կենտրոնական Ուսումնարանական Յանձնաժողովը կազմում է հայոց եկեղեցական-ծխական դպրոցներում պաշտօնավարող և պաշտօնավարել ցանկացող ուսուցիչ-ուսուցչուհիների լիակատար ցուցակը։ Հայրապետական Դիւանը սրանով հրաւիրում է այդ անձանց շուտով ուղարկել Էջմիածին, Նորին Ս. Օծութեան Դիւանի անունով իրանց ուսման (բարձրագոյն, միջնակարգ, երկարամեայ պաշտօնավարութեան, ցենզի, երգեցողութեան, ձեռագործի) վկայականների վաւերացված պատճէնները։

Այդ վաւերացված պատճէններից, որոնք ընդմիշտ պահվելու են Հայրապետական Դիւանի գործերում և չեն վերադարձվելու, կը կազմվի հայ ուսուցիչ-ուսուցչուհիների ընդհանուր ցուցակը, որի մէջ մտած անձինք միայն իրաւունք կունենան պաշտօնի հրաւիրվել հայոց եկեղեցական-ծխական դպրոցներում։

Դիւանապետ՝ Բագրատ վարդապետ

(հ. կ.) առ. 607. 3—1

1912 Թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ
ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ
ԲԱՇԽԵԼՈՒ Է ԵՐԵՔ ՄՐՑԱՆԱԿ

ա) Յանուն տիկին Մ. Մակարեանի՝ լաւագոյն ինքնուրոյն պիէսի համար (150 ռ.)։

բ) «Յոբելեանական» (ի յիշատակ ռուսահայ թատրոնի 50-ամեակի) լաւագոյն թարգմանական պիէսի համար (100 ռ.)։

գ) Յանուն Ա. Մելիք-Այվազեանի՝ լաւագոյն, ոչ մի տեղ չը ներկայացված ինքնուրոյն պիէսի համար (150 ռ.)։

Հեղինակները և թարգմանիչները, եթէ ցանկանում են գաղտնի պահել իրանց անուն-ազգանունը, կարող են կեղծ անուն գրել պիէսների վրա, իսկական անուն-ազգանունները գրելով մի փակ ծրարի մէջ, որ կը բացվի միմիայն մրցանակաբաշխ յանձնաժողովի որոշումից յետոյ։

Այս տարի պիէսները ընդունվում են մինչև սեպտեմբերի 15-ը, որից յետոյ ստացված պիէսները քննութեան չեն առնվի։

Մրցանակի կարելի է ներկայացնել միմիայն նոր պիէսներ, այսինքն այնպիսի պիէսներ, որոնք հայ բեմի վրա դեռ չեն ներկայացված կամ առաջին անգամ ներկայացված են վերջին թատերաշրջանում (առաջին և երկրորդ մրցանակներ)։

Մրցանակը կարող է յատկացվել լրիվին կամ կիսով չափ, նայելով պիէսի գրականական արժանաւորութիւններին։

Մրցանակի արժանացած պիէսի առաջին ներկայացման իրաւունքը պատկանում է Հայոց Դրամատիկական Ընկերութեան և այդ ներկայացման համար վարչութիւնը թարգմանիչներին ոչինչ չէ վճարում, իսկ ինքնուրոյն պիէսների հեղինակներին վճարում է զուտ արդիւնքի 10$^0/_0$-ը։

Այդ իրաւունքը վերապահվում է վարչութեան միմիայն մի տարվայ ընթացքում, սկսած պիէսի ստանալու օրից։

Պիէսները պէտք է ուղարկել վարչութեան նախագահին հետևեալ հասցէով՝ Тифлисъ ул. Паскевича, 1. Т. Н. Іоаннисянцу, Արտասահմանից՝ Tiflis (Russie), rue Paskevitch, 1. M.-r Tigran Ioannissian avocat.

առ. 550. 3—3

ԱՐՁԱՆԱԳՈՐԾ ՄԻՔ. ՄԻՔԱՅԵԼԵԱՆԸ

ցանկանալով տարածել ժողովրդի մէջ մատչելի գներով հայ եւ օտար նշանաւոր գրողների կիսարձանները փոքրիկ դիրքով, նաև ժողովրդական տիպեր ու զուտ գեղարուեստական գործեր, առաջարկում է ձեռնհաս անձանց իրանց համեստ կապիտալը այդ գործնական և շահաւէտ գործի վրա դնելու և միեւնոյն ժամանակ յանձն առնելու զուտ վաճառականական մասը կառավարելու։ Բացատրութիւնների և պայմանների մասին դիմել անձամբ իրան՝ Միքայէլեանին։ Ստուդիօն գտնվում է Փունիկուլէրի ստորին կայարանի հենց կողքին, աջ թևի վրա, սեփական տանը։ Ընդունելութիւնը երեկոյեան ժամը 4—7-ը։

(հ) (առ.) 608. 2—1

ՊՐՈԳԻՄՆԱԶԻՈՆ Կ. ԼԻՍԻՑԵԱՆԻ

Պետական արական պրոգիմնազիաների ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐՈՎ։

Միասեռ ուսուցում տղաների և աղջիկների։ Այս տարի բացվում է երկրորդ դասարանը։ Վերաքննութիւնները սկսվում են օգոստոսի 27-ից, ընդունելութեան քննութիւնները՝ այբուբենական, ստորին և բարձր պատրաստականները, I և II դասարանները մտնելու համար՝ օգոստոսի 28-ից։ Խնդիրները՝ ծննդեան և ծաղկի վկայականների հետ ընդունվում են օգոստոսի 22-ից, առաւօտեան ժամը 10-ից մինչև 2-ը։

Սոլոլակ, Սերգիեվսկայա փողոց, սեփական տուն, № 20. (առ.) 559. 7—4

ՊԱՍՏԱՌՆԵՐ
(ОБОИ)
ԵՂԲ. ՏԱՐՆՕՊՕԼ
ՖԱԲՐԻԿԱՅԻ
Բաժանմունքը Թիֆլիսում, Գօլ. պր. 21,
տուն Արտիստական Ընկ., տելեֆօն № 355.
Պահեստումս կան մեծ հաւաքածուներ բոլոր պաստառների ամենավերջին ոճերով,
ՖԱԲՐԻԿԱՅԻՆ ԻՍԿԱԿԱՆ ԳՆԵՐՈՎ
8 կոպ. սկսած մինչև 6 ռ. իւրաքանչիւր րուլօն։
Ունի պահեստներ Ռուսաստանի գլխաւոր քաղաքներում։
ՆՄՈՒՇՆԵՐԸ ՈՒՂԱՐԿՎՈՒՄ ԵՆ ՁՐԻ։

(և.ու.) առ. 154. 50—47

«ՄՇԱԿԻ» ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ
ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
Համալի Մալախարբիրը
Գ. ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆՑԻ
Գինն է 30 կոպ.
(Ճանապարհածախքով՝ 38 կոպ.)
Այս գրքի վաճառումից գոյացելիք գումարը յատկացվելու է «ՄՇԱԿԻ» ապահովութեան ֆօնդին։
Հասցէն՝ Тифлисъ, Ред. газ. „Мшакъ", կամ Tiflis, Rédaction du journal arménien „Mschak"

ՍԻՄՖԵՐՕՊՕԼԻ համար հարկաւոր է
ՆԵՐՍԻՍԵԱՆԱՒԱՐՏ կամ ՃԵՄԱՐԱՆԱՒԱՐՏ
Մի խմբապետ-ուսուցիչ,
որը ծխական դպրոցում և գիմնազիաներում պիտի ունենայ՝ 8 դաս երգեցողութիւնից, 12 դաս կրօնից, նաև պիտի վարէ մանկավարժական և հոգաբարձական կազմերի քարտուղարական պաշտօնը, կազմէ աշակերտական և սիրողների երգեցիկ խմբեր եկեղեցում երգելու համար (Եկմալեանի պարտիտուրայով)։ Ռոճիկ 1000 ռուբլի։ Համերգներ կազմակերպելու համար առանձին վարձատրութիւն՝ ընդհանուր մուտքի 10$^0/_0$-ը։ Խնդիրները առանց պատշաճ վկայագրերի չը ներկայացնել։ Հասցէն՝ Симферополь, Священнику Налбандянъ.

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
Վերադառնալով ամարանոցից վերսկսեց հիւանդների ընդունելութիւնը։
ՆԵՐՔԻՆ ԵՒ ԵՐԵԽԱՅՑ
ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Առանձնապէս ՍՏԱՄՈՔՍԻ և ԱՂԻՔՆԵՐԻ
Ընդունելութիւնը ամեն օր) 10—11 ժ. առ. (երեխաների)
) 5—7 ժ. երեկ. (ընդհանուր)
Միքայէլեան փող., № 36. տելեֆօն 388.
(և.հ.կ.) առ. 606. 10—1

Մուշտայիդ այգում
Այսօր, երեքշաբթի, օգոստոսի 21-ին
ՎԵՐՋԻՆ ՕՐ
ԽԱՐՓՈՒԹԻ ԹԱՏԵՐԱՍԻՐԱՑ ԽՄԲԻ ՕԳՏԻՆ
ԶԲՕՍԱՆՔ
ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ ՄԵԾ ԾՐԱԳՐՈՎ
Ծաղիկներ, կոնֆետներ, զանազան խաղալիքներ։
✦ Ջրի ակնեմատոգրաֆ։
Երկու երաժշտախումբ։
Հրավառութիւն։ ✦
Սկիզբն է երեկոյեան ժամը 5½-ին։
ՄՈՒՏՔԸ ՁՐԻ Է։
Կարգադրիչներ՝ Ի. Բաստիանով
և Գ. Փիրումեան
առ. 605. 1—1

ԿԱՊՈՒԹԵԱՆ դէմ ֆրանսիական ժողովրդական միջոցը տարածելու նպատակով մենք վաճառում ենք փոքրիկ արկղիկներով, իւրաքանչիւրի մէջ
20
դեղհատ
Գինը
50
կոպէկ

КАСКАРА
МИДИ
L. Midy

1—2 դեղհատ երեկոյեան՝ քնելուց առաջ։
Այդ արկղիկները, նոյնպէս և 50 դեղհատ պարունակողները, կարելի է ձեռք բերել բոլոր դեղատներում և դեղատնային խանութներում։

(5,20) առ. (M. 337683) 962. 18—16

ԾԱՆՐ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

I

Յուզված է եւրոպական ազգաբնակութիւնը կենսական պայմանների աննպաստ վիճակից։

— Ապրել չէ կարելի,—տրտնջում է նա,—թանգացել են ուտեստի մթերքները։

Թանգացել են և թանգանում են։

Մանաւանդ դժուարացել է միս ձեռք բերելը։ Եւ շատ ընտանիքներ, որոնք սովոր են եղել մսի գործածութեանը, ստիպված են կրճատել մսի սպառումը։

Ազգաբնակութիւնը յուզմունքի մէջ է, որովհետև մթերքների վաճառանոցը՝ քանի գնում է՝ աւելի ու աւելի աննպաստ պայմանների մէջ է ընկնում։

Քաղաքացիները դիմումներ են անում քաղ. վարչութիւններին՝ որոնելու և մշակելու միջոցներ, որոնցով կարելի լինէր թեթևացնել սպառողի դրութիւնը։

Եւ մի քանի քաղաքներ, ընդառաջ գնալով կեանքի պահանջներին, աշխատեցին մի շարք կարգադրութիւններով էժանացնել ուտեստի մթերքները, դիւրացնելով գիւղական ապրանքների վաճառումը քաղաքներում և ամեն կերպ մօտեցնելով արդիւնաբերողին սպառողի հետ։

Այդ կարգադրութիւնները մի որոշ աստիճան օգնեցին գործին, բայց հիմնական երևոյթը մնաց նոյնը՝ թանգութիւնը օրէ-օր աւելանում է։

Քաղաքները փորձեցին դիմել մինիստրութեան և հրաւիրել նրա ուշադրութիւնը կարևոր խնդրի վրա։ Բրեսլավլ, Էսսէն, Կարլսբադ, Պօզնան և այլ մի շարք քաղաքներ պատճառաբանված խնդիրքներ մատուցին կառավարութեան, մատնացոյց լինելով մի քանի միջոցների վրա, որոնք կարող են թեթևացնել որոշ չափով ազգաբնակութեան վիճակը։

— Թող ազատ մուտք ունենայ միսը արտասահմանից, թող ուտեստի մթերքների վրա եղած հարկերը և տուրքերը բոլորովին վերացվեն,—պահանջում են բողոքաւորները։

Արդարև՝ Գերմանիայի քաղաքականութիւնը այնպիսի պայմաններ է ստեղծել, որոնք այսօր հասցրել են ժողովրդի կերակրվելու պայմանները ներկայ անմխիթարական դրութեան։ Կառավարութիւնը հարկ է դրել օտար երկրներից ներմուծվող մսի վրա, որպէսզի դրանով շահած լինի իր անասնապահներին, իր կալուածատէրերին։

— Մի քանի հազար անասնապահների օգտի պատճառով վնասվում են միլիոնաւոր սպառողներ. պէտք է վերջ դնել այդ դրութեան։

Բողոքի ձայները զանազան բովանդակութեամբ լսվում են Եւրոպայի բոլոր մասերում, մանաւանդ Գերմանիայում։

Նոյն երևոյթը նկատվում է որոշ չափով և Ռուսաստանում, մանաւանդ Անդրկովկասում։

Մեզանում էլ կեանքի պայմանները դժուարացել են, մեզանում էլ թանգացել են ուտեստի մթերքները, և օրէ-օր աւելի ու աւելի ծանրանում է ազգաբնակութեան ապրուստի վիճակը։

Երևոյթը բարդ երևոյթ է, արդիւնք բազմատեսակ պատճառների և ազդեցութիւնների։ Բայց և այնպէս նա պահանջում է բաւարար լուծում տալ կեանքի կարիքներին։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

18 և 19 օգոստոսի

Պետերբուրգ.—Կազանի վանքում հոգեհանգիստ կատարվեց Կօչանիկում, Սենիցում և Մակեդօնիայի ու Հին Սերբիայի այլ տեղերում սպանվածների համար։ Հոգեհանգստին ներկայ էին սլաւօնական բարեգործական ընկերութեան անդամները, սլաւօնո-մակեդօնական, բօլգարական և սերբիական գաղութների ներկայացուցիչները, սլաւօն ուսանողները, բօլգարական ու սերբիական օֆիցերները։

Բեռլին.—Կայսրը ժամանեց Թագուհու հետ միասին։ Բժիշկները գտնում են, որ կայսրը բոլորովին ապաքինվել է։

Բեռլին.—Բրանդենբուրգի և Բեռլինի ներկայացուցիչների պատւին տրված ճաշկերոյթին կայսրը ի միջի այլոց ասաց. «Մենք կարող ենք գոհ լինել, որ պաշտպանված ենք թշնամու մեծամտութիւնից և տիրապետութիւնից մշտապէս կուռ պատրաստ զօրաբանակով և շարունակ հզօրացող նաւատորմով»։

Նովօչէրկասկ.—Հարաւ-արևելեան երկաթուղու Արժանօվկ և Ալեքսիկօվօ կայարանների միջև, պօստատար գնացքում հինգ չարագործներ յարձակվեցին փող տանող արտելշչիկի վրա։ Սկսվեց գնդակաձգութիւն, որը սաստիկ վախեցրեց ուղևորներին։ Գնացքը [illegible] փախան։ Արտելշչիկը և մի ուղևոր վիրաւորված են։ Փողերը չեն տարել։

Ռօմանգօրն.—Ոստիկանութեան և անցորդների դէմ գնդակներ արձակող և եօթ հոգի վիրաւորող խելագար զինուորը վերջապէս բռնված է ծանր վիրաւորված վիճակում։

Գասսէ (Վեստֆալիա).—Հինգ գողեր, յանցագործութեան մէջ նկատվելով, ծանր կերպով վիրաւորեցին մի ոստիկանի և փախան։ Փօգէլզանգում ոճրագործները գնդակահար արին մի ոստիկանի, որը ուզում էր բռնել նրանց։ Միւսպօյում գնդակաձգութիւն սկսեցին ոստիկանական պահակախմբի հետ, ծանր կերպով վիրաւորեցին երկուսին, թեթև կերպով՝ մէկին։ Չարագործներից մէկը բռնված է, միւսները՝ անյայտացել են։

Ռօմանգօրն (Շվէյցարիա).—Ծառայութիւնից արձակված խելագար զինուորը իր բնակարանում ամրացաւ, մի քանի ժամ գնդակներ էր արձակում անց ու դարձ անողների և նրան բռնելու համար պաշարումն կազմակերպողների վրա։ Չորս հոգի սպանված են։ Երբ ներս խուժեցին բնակարանը զինուորը փախաւ։

Բօստօն.—Լաուրանսում ոստայնագործների գործադուլի ժամանակ պայթված ուժանակի գործը քննելու առիթով կալանաւորված է բրդագործական արտադրութեան ընկերութեան նախագահ Վուդը, մեղադրվելով այն դաւադրութեան մասնակցելու մէջ, որին մասնակցողները ուժանակներ են բաժանել։ Կարծում են, որ ուժանակները բաժանում էին արդիւնաբերողները՝ գործադուլը վարկաբեկելու նպատակով։

Կազաբլանկա.—Ֆրանսիական զօրամասը Մանժէնի հրամանատարութեամբ Մարաքէշի ճանապարհին ջարդեց գահին տիրանալու հետամուտ Բօգին և շարունակում է իր յարձակումը։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

19 օգոստոսի

Ջուլֆա.—Մեր հիւպատոս Չիրիկովը, պահակախմբով Մակու գնալիս, օգոստոսի 14-ին Կարա-Ջիադինի մօտերքում գնդակաձգութեան ենթարկվեց Աթաղա Կամիշլեան գիւղի բնակիչների կողմից։ Կօզակները շրջապատեցին գիւղը։ Անդէն բնակիչները դուրս եկան, իսկ տներում պահ մտածները կրակ բաց արին։ Խոտերը հրդեհելու միջոցով կօզակներին աջողվեց ստիպել թաքնվածներին էլ դուրս գալու, որի միջոցին բռնվեց մէկը զինված։ Զինուորներից մէկը մահացու կերպով վիրաւորվեց։ Մեր կողմից կորուստ չը կայ։ Հրացանաձգութեան միջոցին երկու վերստ հեռու երևացին Քելրալիխանի ձիաւորները, բայց թշնամական գործողութիւններ չը սկսեցին։

Թաւրիզ.—Սիփեհդարը իր շքախմբով քաղաք եկաւ և իջևանեց մասնաւոր տան մէջ։

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՇՈՒՐՋԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

18 և 19 օգոստոսի

Բելգրադ.—Ժողովրդական պաշտպանութեան գլխաւոր կոմիտէտը վաղվայ համար մի մեծ միտինգ է գումարում՝ հրաւէր կարդալու ազգաբնակութեանը եռանդուն կերպով դուրս գալու Թիւրքիայի դէմ։ Ռազմական տրամադրութեան սաստկանալը զինուորականների և քաղաքացիների մէջ՝ վերագրում են, մասամբ, բօլգարների ազդեցութեանը։

Բելգրադ.—Այսօր Թատրոնական հրապարակի վրա 3000-ի չափ քաղաքացիներ և օֆիցերների ներկայութեամբ կատարված միտինգը հետևեալ բանաձևը ընդունեց. «Անիշխանութիւնը Թիւրքիայում սպառնում է սերբերի գոյութեանը, որոնք սաստիկ գրգռված են Նոր-Բազարի ջարդի առիթով. ուր սպանվեց Ռիստա Պօպօվիչը և շատ աչքի ընկնող սերբեր։ Բելգրադցիները եռանդուն կերպով բողոքում են իրանց ցեղակիցների անընդհատ ջնջման դէմ Թիւրքիայում։ Առաջարկվում է սերբ կառավարութեանը եռանդուն միջոցներ ձեռք առնել Թիւրքիայի սերբերին պաշտպանելու համար, յենվելով բոլոր սերբերի զոհաբերութեան միահամուռ պատրաստականութեան վրա»։ Բանաձևը ընդունվել է աղմկալի բացագանչութիւններով «Կորչի Թիւրքիան», «Պատերազմ Թիւրքիային»։ Ճառախօսները կշտամբում էին կառավարութեանը թուլութեան մէջ։

Կ. Պոլիս.—Կալանաւորված է պարլամենտի զինուորական կոմենդանտը։

Բ. Դրան մէջ հաւաստիացնում են, որ Շվէյցարիայում ընդհատված են խաղաղութեան նախնական բանակցութիւնները և կը վերսկսվեն օգոստոսի 20-ից։

Բօլգարական պրեմիէրը հաւաստիացրեց Սօֆիայի թիւրքական դեսպանին, որ Բօլգարիան չի ուժեղացնի իր սահմանապահ զօրքերը։

Աթէնք.—Երէկ Սամօսում կայացած աղմկայոյզ միտինգը պահանջեց հովանաւորող պետութիւնների հիւպատոսներից հեռացնել թիւրքական զօրքերը և վերաքննել սահմանադրութիւնը։ Միջամտող ժանդարմները զինաթափ են արված։ Նրանցից երկուսը վիրաւորվել են։

Ուրմիա.—Մերգվերեան շրջանի Դիգա գիւղում, Ուրմիայից 35 վերստ դէպի հարաւ-արևմուտք, անհնազանդ քիւրդերին պատժելու նպատակով եկաւ թիւրքական մի զօրամաս 300 հետևակներից բաղկացած, 500 եաթերի-սուարներից և վեց լեռնային թնդանօթներից։ Ապա էլի եկաւ 200 հետևակ և երկու թնդանօթ։

Հռոմ.—Միլլատիից հաղորդում են, որ թշնամին աշխատում էր գրաւել իտալական կարաւանները, բայց յետ մղվեց կորցնելով 100 հոգի։ Իտալացիներից սպանված է մէկը և վիրաւորված է 10 հոգի։

ՎՈՍՓՈՐԻ ԱՓԵՐԷՆ

Հայ տպագրութեան 400-ամեակը

Կ. Պոլիս, 8 օգոստոս

Հակառակ այն բուռն ոգևորութեան, որ կովկասահայք ցոյց կուտան տօնելու համար հայ տպագրութեան 400-ամեակը, Կ. Պոլսոյ հայութիւնը կը մնայ մեռելութեան և անշարժութեան մէջ։

Սկիւտարի Թաղային ընկերութիւններէն մէկը նախաձեռնութիւնը ունեցած էր միւս իրեն նման ընկերութիւններն հրաւիրելու և անոնց խորհրդակցութեամբ մշակելու ծրագիր մը։

Այս ընկերութիւններուն ներկայացուցիչներէն բաղկացած մարմինը՝ իբր գործադիր՝ ընտրած էր յանձնաժողով մը, որուն նախագահ կարգուած էր նաև Լեոն Լարենց, և ասիկա արդէն բաւական էր վիժեցնելու համար գործը։

Արդէն անկէ առաջ «Մշակի» խմբագրութիւնը ինքնաբերաբար յայտնած էր, թէ այս տեսակ ոճրագործի մը այդքան նուիրական գործի մը գլուխ կանգնիլը որքան անհամապատասխան էր ազգային զգացումներուն։

Լեոն Լարենցի անունն իսկ բաւական եղաւ այս գործը վիժեցնելու և... արդէն ինքնին մեռաւ... առանց աղմուկի։

Վերջին անգամ ընդհ. ժողովին հրաւէրին և ոչ իսկ մէկ հոգի չէր պատասխանած։

Այնպէս որ՝ այս փորձը չեղեալ կրնայ համարուիլ։

Ուսումն. խորհուրդն ալ իր կողմէն փորձեց կազմակերպել հանդէս մը ի պատիւ 400-ամեակի և յանձնարարեց, որ Իգմիբեան յանձնաժողովը ստանձնէ այս գործը, սակայն անիկա մերժեց։

Հիմա, ուսումն. խորհուրդը, յուսահատ՝ Թիւրքահայերէն, իր ուշադրութիւնը դէպի Կովկաս դարձուցած է և իր կողմէն Ստ. Մալխասեանցը և Յովհ. Յովհաննիսեանը ներկայացուցիչ կարգած է Էջմիածնայ մէջ կատարելիք հանդէսներուն։

Միացեալն ալ, անոր օրինակին հետևելով, որոշած է իր կողմէն ներկայացուցիչ կարգել՝ պ. պ. Ալ. Քալանթար, Հ. Առաքելեան, Ա. Սարուխան, բժ. Շխեան, Ց. Սպէնդիարեան, իսկ Թիւրքահայոց մէջ նոր շարժում մը առաջ բերելու համար՝ ուսումն. խորհուրդը որոշած է նոր յանձնաժողով մը կարգել լրագրաց և Միացեալի, Հայուհեացի, Դպրոցասէրի, Բարեգործականի ներկայացուցիչներէն բաղկացած։

Այս յանձնաժողովի կազմութիւնը և իրական արդիւնք մը առաջ բերելը մեզի շատ տարակուսելի կերևայ, և կրնանք հիմակուընէ յայտնել մեր թերահաւատութիւնը։ Այնպէս որ նոյեմբերին՝ Թարգմանչաց տօնի օրը՝ Էջմիածնայ մէջ թերևս այս փառաւոր տօնը տօնուած ատեն՝ Թիւրքահայոց մէջ ամօթալի անտարբերութեամբ մը ոչինչ պիտի սարքուած ըլլայ, իբր հանրային և հրապարակային արտայայտութիւն։

Քաղաքակրթական ձեռնարկներու նկատմամբ Թիւրքահայոց այս աղէտալի անտարբերութիւնը մասամբ արդիւնք է երկրին վիճակին, որ շարունակ շփոթութեան մէջ է, և նոյնքան ալ Թիւրքահայ լրագրութեան ստացած ուղղութեան։

Հասարակութեան մէջ եռանդ ու ոգևորութիւն առաջ բերելու համար լրագրութիւնը պէտք էր ոյժ տար գաղափարին, մինչ Թիւրքահայ լրագիրը, հարիւր անգամ աւելի հետաքրքիր Զինաստանի անցուդարձերուն, բնաւ չի շահագրգռուիր հայ կեանքին ներքին դրուագներով և անոր քաղաքակրթական շարժման երևոյթներով։

Ասոր համար Թիւրքահայ լրագրութիւնը գրեթէ ոչինչ ըրաւ մինչև հիմա հայ տպագրութեան 400-ամեակին առթիւ՝ ժողովուրդին մէջ եռանդ և ոգևորութիւն արծարծելու համար, և միայն քանի մը խրոխտութիւններ արձանագրելով բաւականացաւ։

Հայ լրագրութիւնը Թիւրքահայոց մէջ կապուած ըլլալով անհատական կամ կուսակցական շահերու՝ չունի այն հանրային առաջնորդողի շնորհը, որ մենք կը տեսնենք յաճախ կովկասահայ մամուլին մէջ, ուր գաղափարական տարրն աւելի տեղ գրաւած է։

Այս պայմաններու մէջ՝ կերևայ թէ հաւաքական ձեռնարկ մը բնաւ չպիտի ըլլայ Թիւրքահայոց մէջ, ուր արդէն գաղափարներու շուրջը համախմբուիլ անսովոր երևոյթ մըն է, մինչ պայքարող, քանդիչ գործունէութիւն մը ցոյց տալ շատ սովորական։

Թիւրքահայ ամբողջութեան այս անտարբեր վերաբերումը սակայն անհատներ կը զարմանէ։

Տէր-Ներսէսեան տպարանը նախաձեռնարկ եղած է հայ տպագրութեան 400-ամեակին առթիւ հրատարակելու գեղարուեստական ամփոփ գործ մը, որ կը պատրաստէ «Ամենուն Տարեցոյցը» շահեկան օրացոյցներուն հեղինակը՝ Թէոդիկ։ Այս գործը պատմութիւնը պիտի ըլլայ 400 տարուան մէջ իրարու յաջորդող բոլոր տպարաններուն և պիտի պարունակէ կենսագրութիւնները և պատկերները բոլոր հայ տպագրիչներուն։

Ամեն տպարաններէ լոյս տեսնող գիրքերուն նմանատպութիւնները պիտի երևան հատորին մէջ, որ պիտի տպագրուած ըլլայ խիստ ընտիր թուղթի վրայ և երկգոյն ու խնամեալ տպագրութեամբ։

Այս գործը, իբր գնահատելի աշխատութեան մը արդիւնք Թիւրքահայոց ժամանակցութեան միակ արտայայտութիւնը պիտի ըլլայ, և կը կարծենք, թէ պատուաբեր պիտի ըլլայ զայն պատրաստողներուն համար ալ, Թիւրքահայոց համար ալ։

«Տաճար» կրօնաթերթն անկէ մէկ երկու շաբաթ առաջ ծանուցած էր, թէ ուրիշ Թիւրքահայ գրող մըն ալ, որուն անունը չէր տրուած, կը պատրաստէ ուրիշ գործ մը հայ տպագրութեան պատմութեան վրայ, սակայն այս լուրը մեզի անհաւատալի կը թուի, զի մինչև հիմա չէ յայտնուած այս գործը պատրաստողին անունը։

Մեր հարցասիրութիւնը անօգուտ եղաւ և չկրցանք հասկնալ, թէ ով է այս գործին հեղինակը և ինչ է պատրաստուածը։

Ի վերջոյ տեղեկացանք, թէ այս գրոյցը առաջ եկած է պարզապէս Լարենցի նախորդ ատենապետութեան տակ գտնուած յանձնաժողովին մշակած մէկ ծրագրէն, որով կոչում կըլլար կարգ մը գրողներու՝ հայ տպագրութեան պատմութեան վերաբերեալ հատուածներ տալ, անոնցմով կազմելու համար ժողովածու մը։

Սակայն այդ յանձնաժողովն իր մահկանացուն կնքած ըլլալով, բնական է, թէ այս ծրագիրն ալ մեռած է։

Շառայլ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՓՈՔՐԻԿ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Բնակարանային հարցը

Ահաւասիկ ճիշդ որ մի մեծ, անլուծված հարց՝ կենտրոններում ապրողների համար։

Տարիներ առաջ մենք «Մշակի» էջերում խօսել ենք այս հարցի առիթով, և ահա նորից ստիպված ենք կանգ առնել այս հրատապ խնդրի վրա։

Բնակարանների թանգանալը կենտրոններում մենք շատ բնական ենք համարում և իբրև հետևանք կեանքի բէյալ պահանջների. մինչ մի կողմից ազգաբնակութիւնը շատանում է բնական աճումով, միւս կողմից նաև աւելանում է գաւառներից եկւոր տարրերով, և շատ զգալի չափերով, ահա այս բոլոր բազմութիւնը պէտք է մի կերպ տեղաւորվի բնակարաններում. և խնդիրն այն է, որ այդ բնակչութեան մեծ մասը ձգտում է ապրել քաղաքի կենտրոնամասերում։ Քաղաքի կենտրոնամասերը միշտ բռնված են լինում վարձողներով, ուստի և մէկը միւսից խլելու համար յաճախ գները բարձրացնում են, այնուհետև դուրս քշվածները աշխատում են գոնէ կենտրոնամասերից մօտիկ մասում ապրել և փոխադարձաբար նոյն ձևին են դիմում՝ ինչ իրանց հետ վարվողները, այսինքն քրէհները աւելացնում և համեմատաբար խեղճ դասակարգին աւելի քաղաքի ծայրերը քշում. և այդպէս՝ թանգութեան ալիքը սկսելով՝ կենտրոնից քշվում է տարածվելով դէպի քաղաքի ամեն մասերը։

Իսկ տնատէրերին ինչ է հարկաւոր. հէնց մի այդպիսի դրութիւն. և ահա նրանք էլ. տեսնելով իրանց ապրանքի մեծ պահանջը, աւելի ևս թանգացնում են բնակարանների վարձը. և այս բոլոր տեսարանը մանաւանդ օգոստոս ամսին յիշեցնում է կատարելապէս ձիարշաւները. տնատէրերը հեծած բնակարաններ վարձողների վրա՝ աշխատում են միմեանցից առաջ ընկնել գները թանգացնելու մէջ և հնար եղածին չափ դատարկել բնակարան վարձողների գրպանները։

Թիֆլիսում վերջին երկու տասնեակ տարիներում բնակարանների վարձը աւելացել են 200—300 տոկոսով, այսինքն գները կրկնակի, եռակի աւելացել են։

Տնատէրերը սկզբներում, երբ ուզում էին գները աւելացնել, գոնէ ծածկվում էին թզենու տերևներով՝ պատճառաբանելով աւելացնելը զանազան հարկերի աւելանալով, դռնապանների պարտաւորեցուցիչ դառնալով ծախսերի աւելանալը. սակայն այժմ այդ անմեղ թզենու տերևները էս մի կողմ շպրտելով՝ ցինիկաբար պահանջում են սոսկալի գներ, ուղղակի պատճառաբանելով որ իրանց հարևանը աւելացրել է գները, հետևապէս և իրանք էլ պիտի գները աւելացնեն։

Մենք չենք ուզում բողոքած լինել տնատէրերի անյագուրդ ախորժակների դէմ. դա կը լինէր աւելորդ ժամավաճառութիւն. տանտէրը, երբ տեսնի թէ իր բնակարանները երկար դատարկ են մնալու, ինքը ուրախութեամբ կը պակասեցնի գինը և ամեն յարմարութիւն կը տայ վարձողներին, որպէսզի վարձեն այդպիսիք։

Ուրեմն խնդրի իսկական չարիքը նրա մէջն է, որ բնակարանների մեծ պահանջ կայ և եղածները չեն բաւականանում։

Այսպիսով, եթէ կամենում ենք այս անլուծված հարցին բաւարար լուծումն տալ, նախ և առաջ պիտի հնարներ մտածենք բնակարանները աւելացնելու մասին։

Հէնց առաջին միտքը, որ իւրաքանչիւր մտածող ունենում է այս խնդրի մասին, բնականաբար նա է, թէ քաղաքում եղած տները և տեղերը շահագործէ՝ աւելացնելով բազում յարկեր շինութիւնների վրա. ճիշդ որ դրանով խնդրի լուծումը մասամբ կը հեշտանայ, սակայն այդ ձևով բնակչութիւնը կենտրոնական մասերում սարսափելի կը խտանայ և բնակարանները մեծ մասամբ զուրկ կը լինեն առողջապահական կանոններից, արևի տաքութիւնից, լոյսից, պարզ և մաքուր օդից, ներքնայարկերը բացառապէս խոնաւ են լինում, այսպիսով ստեղծվում է պատրաստ հող ամեն տեսակ հիւանդութիւնների և վատառողջութեան։

Այս ձևով են մտածում եւրոպական խոշոր կենտրոնների համար նոյն հարցով զբաղվողները. և վերջերս շատ ընդունելութիւն է գտնում կենտրոնների մօտ հիմնել պարտէզ-քաղաքներ, ուր մեծ քաղաքների բնակչութիւնը ապրում է, իսկ այնտեղից էժան և արագընթաց գնացքներով գնում քաղաք, իրանց սովորական պարապմունքներին։ Այդպիսի քաղաքները աշխատում են հնար եղածին չափ լայն տարածութեան վրա քիչ-յարկանի տներով և անպատճառ իւրաքանչիւր տան կից պարտէզով։

Այս ձևով արդէն փորձում են ազատվել թէ մեծ քաղաքների քայքայող թանգութիւնից և թէ հակառողջական պայմաններից։

Մեր կարծիքով՝ նոյն ձևով կարելի էր փորձել նաև Թիֆլիսում, վճռել մեզանում ևս հասունացած բնակարանային խնդիրը, մանաւանդ որ Թիֆլիսը դասաւորված է մի այնպիսի փոսի մէջ, որտեղից տարածվելու հնար չունի շնորհիւ շրջապատող բարձր սարերի. մնում է որ հիմնվեն արուարձաններ մօտ գիւղերում, ինչպէս օրինակ՝ Աւճալա, Ծղնէթ, Օքրօխանա և այլն և կամ այդ գիւղերի և Թիֆլիսի մէջ տեղերում։

Տարածութիւնները յիշված տեղերից մինչև Թիֆլիսի կենտրոնները այնքան էլ շատ չեն, այնպէս որ, եթէ հիմնվեն մեր առաջարկած այսպէս ասած պարտէզ-քաղաքամասերը՝ ձիաքարշով կամ օմնիբուսով և կամ աւտօմօբիլով ընդամենը 20—30 րօպէի ճանապարհ են։

Իսկ թէ ինչ ձևով և միջոցներով իրագործել այսպիսի խոշոր ձեռնարկութիւններ, կը խօսենք մի ուրիշ անգամ։

Շիրին

ՅՕԳՈՒՏ «ՊԷՊՕՅԻ» ԱՐՁԱՆԻ

Ստացանք Վերին-Ագուլիսից, դերասան Սևումեանից 10 րուբլի։ Մինչև օրս հաւաքված 461 ր. 29 կ.-ի հետ միասին (տես «Մշակ» № 148) ընդամենը ստացել ենք 471 ռուբ. 29 կոպ.։

ԿԵԱՆՔԻ ՑԱՒԵՐԻՑ

XV

Ուսուցչի դրութիւնը

(Մի առաջարկութիւն)

> Միայն այն ազգերն ապագայ ունեն, միայն այն ազգերին կարելի է պատմական կոչել, որոնք ունեն նուրբ զգացողութիւն դէպի այն բոլորը, ինչ որ կարևոր է, ինչ որ անհրաժեշտ է իրանց հաստատութիւններին, որոնց նրանք թանգ են գնահատում։
>
> Տոլստոյ

Գ.

Անագորոյն իրականութիւն, որ որքան դառը, ցաւալի, կոպիտ, նոյնիսկ վայրի է, նոյնքան և ճշմարիտ, նոյնքան գոյութիւն ունեցող ու տիրապետող է։

Իդէալով, սուրբ գործով տոգորված գիւղ է մտնում լուսաւորութեան քարոզիչը, բայց ապառաժների է հանդիպում։ Անցնում է մէկ, երկու, մի քանի տարի, ու ահա հիասթափութիւնը իր ծայրագագաթին է հասնում։ Նա յոյս ունէր, մխիթարում էր իրան, որ գուցէ մէկ օր, շուտով փոխվի այդ ամենը. բայց ի զուր. մարում է վերջին յոյսի թոյլ, առկայծուն շողն անգամ, ու նա անիծում է և իդէալը, և սուրբ գործը, և ուսուցչութիւնը ու յետ նայելով իր անցեալ կեանքին՝ տեսնում է, որ այնտեղ ոչ մի լուսաւոր կէտ էլ չը կայ, մխիթարանքի ոչ մի բան չը կայ։ Տեսնում է, որ իր տատասկոտ ուղիով ընթանալիս չէ ունեցել ոչ մի արևոտ օր, մի երջանիկ օր, որ նա փոխանակ նիւթական օժանդակութեան, փոխանակ իր իսկ արժան վարձահատուցման, բարոյական մխիթարանք էլ բոլորովին չէ ունեցել։ Երջանիկ կեանքի փոխարէն՝ նա վաստակել է թոքախտը, աչքերի կուրութիւնը, առողջութեան վերջնական քայքայումը ու այդ ամենի հետ անբաժան՝ քաղցած ընտանիքը, վեց-վեց անող փորը և... ծակծկված շորերը։

Եւ ինչ է մնում նրան անելու եթէ ոչ թողնել այդ ասպարէզն ու գնալ կեանքի մի այլ, աւելի հանգիստ ուղիով։ Ջը մտածէք որ դրանք թուլամորթ էին, կռւից խոյս տուող վատթար զինուորներ. ոչ. այլ որովհետև ուրիշ հնար չը կայ։

Կենդանի տառապանքից լաւը մահն է, լինի այդ մարմնական թէ գաղափարների։

Երբ ստամոքսը բաւարարութիւն է պահանջում, էլ ժամանակ չէ լինում «գաղափար», «իդէալ», «սուրբ գործ» ֆրազները դառանցելու։

Բայց թող ոչ ոք չը մտածի, որ այդ իրականութիւնը անփոփոխելի, անդարմանելի է, որովհետև գոյութիւն չունի ոչ մի անդարմանելի բան, նամանաւանդ ուսուցչութեան ներկայ կեանքը, այն էլ այս ժամանակ, երբ հասկացվել է ուսման նշանակութիւնը, երբ աստիճանաբար պահանջ է դառնում այդ, միայն հարկաւոր է ճռճռան ֆրազների, բշտիկներ կազմող օդային բառերի փոխարէն գործ անել։ Եթէ իւրաքանչիւր հարիւր հազար այդպիսի ֆրազների փոխարէն մի չնչին, շատ պստիկ գործ կատարված լինէր, այժմ արդէն այդ իրականութիւնը այլ ևս չէր լինի ու իր ամբողջ մերկութեամբ չէր կանգնի ուրուականի նման ուսուցչի առաջ ու քշի նրան իր ընտրած ասպարէզից։

Մի չնչին իրական գործը շատ աւելի նշանակալից ու արդիւնաւէտ է, քան «ազգասիրաբար» տաք ու փառահեղ դահլիճներում ու միայն թղթի վրա սևով արձանագրվող ցանկութիւնների փքուն ճառերը, որոնք, հաւատացած եմ, արտասանվում են ոչ այնքան գործի, որքան էֆեկտի համար։ Օրինակը ունենք. պ. Առաքել Առաքելեանի կարգադրութիւնները Ղարաբաղի թեմում, ուր պարոնը ստիպել է դպրոցի տնտեսականը վարող մարմիններին կատարելու իր առաջարկները և ուր ինքն է նշանակում ուսուցիչներին և այլն («Մշակ» (№ № 149, 150, 151 և 152)։

Անելանելի, այո, անելանելի է ուսուցչութեան վիճակը, և ահա հէնց այդ անելանելի դրութեան վերացումն է, որ սպասվում է այն իշխանութիւնից, որին ենթարկված են մեր դպրոցները։

Հոգևոր իշխանութիւնն ու թեմական տեսուչները շատ ու շատ բան կարող են անել, եթէ միայն ուզենան։

Նրանց պարտականութիւնն է (և կարծեմ հէնց այդ բանի համար էլ կոչված են) հսկելու, որ ուսուցիչները չենթարկվեն քմահաճոյքների։ Ուսուցչական խմբերը կենտրոնական գիւղերում ու քաղաքներում շուտ-շուտ չեն փոխվում. նրանք երկար են մնում իրանց տեղերում. լաւ. ապա գիւղերում...

Թեմական տեսուչների, որոնք շրջում են գիւղերը, մի խօսքից շատ բան է կախված. բաւական է, որ նրանք նեղութիւն կրեն առնելու և պատուիրելու հոգաբարձութեան, որ ուսուցիչները չը պէտք է արձակվեն, բաւական է ստիպեն նրանց (ոչ դագանակով, այլ խօսքով և ստորագրութեամբ), որ նրանք աւելացնեն ուսուցչի ռոճիկը և այլն, և մենք ու մեզ հետ բոլորն էլ համոզված ենք, որ այդ հէնց նոյն տարում իսկ կիրականանայ։ Բաւական է կամ հոգևոր իշխանութեան մի երկտող շրջաբերականը, որ հոգաբարձութիւնը իրաւունք չը համարի իրան մայիսի վերջին դուրս շպրտել ուսուցչին և այլն, ու այդ կունենայ իր զգալի հետևանքը։

Միայն ուսուցչի դրութեան ապահովութիւնը չէ, որ պահանջում է այդ, այլև դպրոցի կրթականի առաջադիմութիւնը։

Այդ բանը չէ ըմբռնում գիւղացին. նա կարծում է, թէ լաւ կը լինի, եթէ ամեն տարի «թազա» ուսուցիչ ունենայ. բայց ինչի է նմանվում այնպիսի դպրոցը, ուր ամեն տարի մէկ ուսուցիչ է գալիս. ջուր ծեծել, ուրիշ ոչինչ։

Ուսուցչի դրութեան բարւոքման գործի համար կոչված իշխանութիւնը իր թեմական տեսուչներով, դիւաններով և այլն պէտք է իրականացնի հետևեալները մօտաւորապէս, որպիսի առաջարկ եղել է «Մշակ» № 151-ում։ Նորից կրկնում ենք, իր մի շրջաբերականով, տեսչի մի պահանջով կարելի է իրականացնել։

1) Որոշել դասագին ըստ առարկաների։

2) Ուսուցիչներ արձակելը վերապահել միմիայն իրան՝ հոգևոր իշխանութեանը, խստիւ պատուիրելով դպրոցների վարիչներին ինքնագլուխ ուսուցիչ չարձակելու։

3) Ուսուցիչ հրաւիրողը բոլոր դպրոցների համար լինեն թեմական տեսուչները։ Դրա համար պէտք է, որ տեսուչները իրանց շրջագայութեան ժամանակ հոգաբարձուներից ստորագրութիւններ վերցնեն։ Այդպիսի ստորագրութիւնների կարիք կը զգացվի առաջին, գուցէ մասամբ և երկրորդ տարին, այնուհետև իր նորմալ ուղին ընդունելով՝ էլ ոչ մի խոչընդոտի չի հանդիպի։

4) Ուսուցիչը հրաւիրվի առնուազն երեք տարով։ Հեռացնել կարելի է հոգևոր իշխանութեան կարգադրութեամբ իր հակամանկավարժական լինելու համար։

5) Որոշել աւագութեան համար որոշ վարձագին, բացի դասերից։

6) Փոխադրվելիս պահպանեն միևնոյն պաշտօնները, օրինակ՝ աւագ ուսուցիչը կրկին աւագ-ուսուցչութեան պաշտօնով և միևնոյն տեսակի (դասարանների չափով) դպրոցներում։

7) Ռոճիկը վճարվի ամսէ-ամիս, բաժանված 12 ամիսների (ամառային արձակուրդի երեք ամիսներն հաշուած)։

8) Հրաւիրվեն միջնակարգ կրթութիւն ունեցողները միայն (բացառութիւններ կը լինեն, ի նկատի առնելով այնպիսիների մանկավարժական հմտութիւնը), որովհետև ցած կրթութեան տէրերը պակաս ռոճիկով համաձայնվելով՝ փակում են ցենզիտաւորների առաջը, և յաճախ տեսնում էք ցենզիտը անգործ է, իսկ ոչ-ցենզիտը հրաւիրված։

Սակայն այս կէտը ինքն ըստ ինքեան կը վերանայ, երբ ուսուցիչ նշանակողը լինի թեմական տեսուչը։

Ահա այս կէտերի իրականացումից է կախված ուսուցիչների և դպրոցների բարեյոյս վիճակը։

Հրաւիրում ենք ուսուցիչ-ուսուցչուհիներին ևս արձագանք տալու և լրացնելու մեր ասածը։

Մի վերջին յոյս է մնացել, որը և դրված է նորընտիր Գէորգ Ե. Կաթողիկոսի վրա, որի նպատակն է նոյնպէս, ինչպէս երևում է, դպրոցների բարելաւումը։

Հրաւիրում ենք Վեհափառ Հայրապետի ուշադրութիւնը այս բանի վրա, սպասելով որ, իբր սրտին մօտ համարելով այս հարցը, կը հրամայէ իրականացնելու, թեմական առաջնորդների շրջաբերականներով և տեսուչների պահանջներով։

Նորից կրկնում ենք, որ կիրականանայ այդ ամենը, եթէ ցանկութիւն և թղթի վրա մնացող արձանագրութիւնների ու փքուն բառերի փոխարէն՝ լինի իրական գործ, գործ և գործ...

Իրականացնելով այդ, ցոյց տուած կը լինենք, որ իսկապէս մենք մեր հասարակական այդ սուրբ հաստատութեան՝ դպրոցի կարիքը զգում ենք, ոչ միայն զգում ենք, այլ և նախանձախնդիր ենք նրա բարգաւաճման, որովհետև «միայն այն ազգերն ապագայ ունեն, միայն այն ազգերին կարելի է պատմական կոչել, որոնք ունեն նուրբ զգացողութիւն դէպի այն բոլորը, ինչ որ կարևոր է, անհրաժեշտ իրանց հաստատութիւններին, որոնց նրանք թանգ են գնահատում»—ասել է մեծ փիլիսոփան՝ Տոլստօյը։

Ցոյց տանք, որ ունենք ապագայ, ապացուցենք, որ թանգ ենք գնահատում մենք մեր դպրոցների առաջադիմութեան գործը, որին հասնելու համար բարելաւենք նրա քրտնաջան մշակի կեանքը, որովհետև ինչպէս առանց երկրագործի չի հերկվի երկիրը, այնպէս էլ առանց ուսուցչի գոյութիւն չէ կարող ունենալ դպրոցը։

Արշալոյս Տէր-Յովհաննեան

Օրդուբաթ

«ԺԱՄՀԱՐԵԱՆ» ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՇՈՒՐՋԸ

«Մշակի» № 166-ում մի քանի պատճառաբանութիւններ առաջ բերելով՝ շեշտել էի, որ Ժամհարեան եղբայրների անունով հիմնվելիք գիւղատնտեսական դպրոցը անպայման պէտք է կառուցանել Ղարաբաղում, լինի այդ Խանաբաղում, Խանքենդում թէ Ամարասում միևնոյն համարելով։ Այդ դպրոցի կառուցման համար կազմված յանձնաժողովը մինչև այսօր քննած տեղերը գտել է անյարմար, Խանաբաղը թողնելով անորոշ դրութեան մէջ։ Ամարասի մասին ոչ մի հարց չէ եղել։ Այդ խնդիրը դնում եմ իմ կողմից, և յոյս կայ, որ Ամարասը իր առաւելութիւններով կը տանի յաղթութիւնը դպրոցը կառուցանելու խնդրում։

Ամարասը գոյութիւն ունի 332 թւից և հիմնված է Գրիգոր Լուսաւորչի ձեռքով։

Այսպէս՝ այդ վանքը Ղարաբաղի թեմի բոլոր վանքերից ամենահինն է։ Ամարասը գտնվում է Վարանդայի արևելեան վերջաւորութեան Ամարաս կամ Հէջազ գետակի վրա։ Տարիների ընթացքում արտաքին թշնամիների ձեռքով այդ վանքը աւերվել է. նոյն իսկ պատմութիւնը ցոյց է տալիս, որ պարսից շահերից մէկը շրջապատելով այդ վանքը և ներս մտնելով՝ հրամայում է կործանել և իր սարվազներին կէնտ-կէնտ կանգնեցնելով մինչև Արաքս գետը, նրա քարերը իրար տալով՝ թափել են Արաքս գետը, հետքը իսպառ կորցնելու համար։ Սակայն Աղուանից Վաչագան թագաւորը 530 թւին նրան դարձեալ վերանորոգում է։ Կառուցանելով այդ վանքը՝ այդ թւից մինչև 1858 թիւը՝ դառնում է հայերի և տեղական թուրքերի ծանր վէճի առարկայ։ Հայերը պնդում են, որ այդ՝ Աղուանից երկրի կաթողիկոսարանն է, այդտեղ են նստել Աղուանից երկրի ս. Գրիգորիս (ս. Գրիգոր Լուսաւորչի թոռը) և այլ կաթողիկոսները, իսկ թուրքերը՝ որ այդ տեղը իրանցն է և այդտեղ թաղված է իրանց 124 հազար մարգարէներից մէկը։ Թուրքերը, յարուցանելով այդ վէճը, կամեցել են այդ պատրուակով տիրել նաև այդ վանքի շրջակայ արգաւանդ հողերին։

Ղարաբաղի թեմի առաջնորդ Գէորգ արքեպիսկոպոս Վեհապետեանը 1858 թւին այդ վանքի վերջնական վերանորոգութիւնը յանձնում է Գէորգ Ամբրումեանին, որ սա իր հսկողութեամբ և հմտութեամբ վանքը վերածի կարևոր գեղեցկութեան և վայելչութեան։ Ամբրումեանը զանազան տեղերից սկսում է պեղումներ անել, թէ արդեօք կարող կը լինի գտնել ս. Գրիգորիսի գերեզմանը, որ թաղված էր այնտեղ, բայց մնում էր անյայտութեան մէջ։ Այդ լուրը կայծակի արագութեամբ տարածվում է ամբողջ Ղարաբաղում, ժողովվում են հազարաւոր մարդիկ Դիզակից, Վարանդայից և Խաչէնից։ Նոյն իսկ Շուշի քաղաքի ժողովուրդը, մեծ թէ փոքր, որը ձիով և որը ոտով, արագաբար աճապարում է հասնել Ամարաս և տեսնել ս. Գրիգորիսի նշխարները և երկրպագութիւն տալ և իր ուխտն ու յարգանքը մատուցանել։ Այդտեղ են ժողովվում և մի ստուար թիւ թուրքեր իրանց կալուածատէր բէկերով։ Նորից բորբոքվում է հին վէճը. հայերը պնդում են, որ գերեզմանը և ս. Գրիգորիսը իրանցն է, իսկ թուրքերը հակառակվում են, որ այդ ս. Գրիգորիսը չէ, այլ իրանց մարգարէներից մէկը, և որ վանքը և շրջակայ հողերը իրանցն են։ Խնդիրը սուր կերպարանք է առնում, երկու բանակ կանգնում են դէմ առ դէմ՝ պատերազմ սկսելու։ Այդ լսում են առաջնորդ Գէորգ արքեպիսկոպոսը և Շուշուգաւառապետը և խսկոյն ճանապարհվում են Ամարաս՝ խաղաղեցնելու գրգռված ամբոխը։ Գէորգ արքեպիսկոպոսի և գաւառապետի հսկողութեամբ շարունակվում են պեղումները, և գերեզմանի կողմից նկատվում է մի խաչքար և ս. Գրիգորիսի նշխարները. Թուրքերն այդ տեսնելով՝ խսկոյն հեռանում են, իսկ հայերը թափվում են երկրպագելու իրանց հայրապետի մասունքներին։ Այդ օրվանից փաստալից կերպով Ամարասը իր շրջակայ կալուածներով համարվում է հայերի սեփականութիւն։ Դրանից յետոյ վանքի սենեակները վերանորոգվել են Գրիգոր Այվազեանի և այլոց ծախքով, ապա աւերվել 1905—1906 հայ-թուրքական ընդհարումների ժամանակ և նորից վերանորոգվել։ Վանքը շրջապատված է քառակուսի պարսպով, որի երկարութիւնը կարելի է համարել մօտ 120 արշին, իսկ լայնութիւնը 50։

Խնդրի առանցքից թէև հեռացայ, բայց աւելորդ չը համարեցի այս համառօտ տեղեկութիւնը, որ վերաբերում է Ամարասի պատմութեանը, դնել ընթերցող հասարակութեան առաջ։ Ամարասը Ղարաբաղի թեմի վանքերի մէջ միակն է, որ կառուցված է դաշտավայր-տափարակ տեղում. միւսները գտնվում են բլուրների և լեռների գագաթներին կամ նրանց ստորոտներում։ Ամարասը իր շրջակայ հողերով ամբողջ Ղարաբաղում համարվում է ամենաարգաւանդը։ Գովված են այնտեղի ցորենը, որ տալիս է սպիտակ լաւաշ հաց, գարին, թութը, խաղողը և այլ զանազան մրգեղէնները։ Ղարաբաղում գովված են Դզզալայի, Տօղի և Հաղրութի գինիները, որոնցից տակառներով ուղարկվում են Բագու և Ռուսաստան, բայց սրանց գլուխ կանգնած է Ամարասի գինին, որովհետև խաղողը շատ լաւ հասնում է տաք կլիմայի տակ։ Հողը բերրի է, պտղատու, ձգած սերմը տալիս է մէկին 10—20։ Աւետարանոց, Ջրաղացներ, Ղարաբուլաղ, Սարուշէն, Մոշխմհատ, Ալամանց և այլ գիւղերը կենդանի են միայն Ամարասով, որոնց ապրուստը տալիս են Ամարասի հողերը։

Օդը թէև բաւական տաք է, բայց առողջարար է, չէ բովանդակում ջերմախտ և նման հիւանդութիւններ պարունակող վնասակարութիւն։ Ջուրը մաքուր է և առողջարար։

Ամարասում կարելի է բուսցնել բամբակ և չալթուկ և առատօրէն պտուղ ստանալ։ Այնպէս որ գիւղատնտեսական դպրոցը իր կաթնատնտեսական, այգեգործական, երկրագործական և արհեստագիտական ճիւղերով միանգամայն յարմար է այնտեղի պայմաններին։ Վանքն առաջներում ունէր 500 դեսեատին վարելահող. իսկ այժմ անդամահատվելով հասել է 160-ի։ Շրջականերում հայ կալուածատէրերը ունեն խոշոր տնտեսութիւն և վար ու ցանք, որոնցից նշանաւոր են Մ. Մելիք Շահնազարեանի ժառանգները, որոնցից մէկը նոյնիսկ գիւղատնտես է։ Ամարասը արևելքից մինչև արևմուտք, այսինքն վանքի տափարակից մինչև Հիրհեր, Ծովաթեղ և Սօս գիւղերը ծածկված են խաղողի և թթի խիտ այգիներով. մնացած տեղերը ծածկված են դաշտերով, ուր ցանում են ամեն տեսակ հացաբոյս։ Հողը կատարեալ սև է և արգաւանդ։ Հրաւիրում ենք Ժամհարեան եղբայրների և նրանց հիմնիլիք գիւղատնտեսական դպրոցի յանձնաժողովի պ. պ. անդամների ուշադրութիւնը այդ հողի վրա, քննել, ապա այդտեղ կառուցանել ցանկալի դպրոցը և այդպիսով ծաղկեցնել, կենդանացնել նախկին Աղուանից կաթողիկոսարանը։

Ամարասը ունի բաւական յարմարութիւններ այդ դպրոցն այնտեղ ունենալու համար։ Նախ՝ Շուշուց մինչև Կարեագին անցնող նոր խճուղի ճանապարհն անցնում է Ամարասի հարաւային կողմով։ Երկրորդ՝ յարմարաւոր ճանապարհներով կապված է Խօնաշէնի, Կարեագինի և Աղդամի հետ։ Կարեագինը, որ ունի պօստատուն և հեռագրատուն, գտնվում է ընդամենը մէկ ժամ ճանապարհ հեռաւորութեան վրա, վերջապէս պահվող կաթնատու և լծկան անասունները ամառը կարելի է տեղափոխել Քիրս լերան ստորոտները և օգտվել այնտեղի անհագին տարածութիւն ունեցող արօտատեղերով։ Ամարասը այլև չունի ոչ մի թերի կողմ կամ պատճառաբանութիւն դպրոցի կառուցումը վանելու իր արգանդից։

Պետ. ք. Տէր-Յովհաննիսեան

Շուշի

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ

Սուվալկեան, Վիլենեան և Կովենեան նահանգների վարչութիւնը յայտնում է, որ լեհական առաջադիմական կուսակցութեան ներկայացուցիչների ու լիտովցի ընտրողների միջև ընդհարում է առաջ եկել։ Լիտովցիներն անբաւական են լեհացիներից, որովհետև վերջինները արհամարհում են լիտովցիների շահերը։ Այդ ընդհարման պատճառով լիտովցի և ռուս ընտրողների բլօկ կազմելու միտքը յղացվեց, բայց այդմ էլ տեղական վարչութիւնը ամեն ջանք գործադրում է այդ մերձեցումն իրականացնելու։ Վարչութեան հաղորդածին նայելով՝ օպպօզիցիայի շատ մերձ շանսեր կան Ուֆիմեան, Վեատկայի և Պերմեան նահանգներում։ Կառավարութեան մեծ կուսակցութեան կանդիդատներն ընտրվելու և ոչ մի յոյս չունեն։ Պերմեան նահանգում աջողութեամբ օգտվում են ոչ միայն չափաւոր առաջադիմական խմբակցութիւնների թեկնածուները, այլ և ծայրայեղ ձախակողմեան կուսակցութիւններինը։

Ընդհանրապէս հիւսիս-արևելեան շրջանը նկատվում է որպէս «անբարեյոյս» մի վայր։ Մի քանի նահանգների վարչութիւնները գիւղացի մասսաների համակրանքը կառավարութեան կողմը քաշելու համար՝ անհրաժեշտ համարեցին հարկերի և պարտքերի պահանջումը թուլացնել։ Սամարայի, Արխանգելսկի, Սարատովի և Տվերեան նահանգների հաղորդագրութիւնն էլ ուշադրութեան արժանի է. այդ տեղերում վտանգաւոր ընդդիմադրութիւն է սպասվում։ Սամարայի նահանգում առաջադիմական բլօկից է վտանգ սպասվում. Սամարայի վարչութիւնն իր վրայից պատասխանատուութիւնը վերցնում է. նա ամբողջ չարիքը Սարատովեան նահանգին է վերագրում։ Վաճառականութեան և միջին դասի ազգաբնակութեան ընտրողների վրա ազդել են 3-րդ Դումայի պատգամաւորներ կոմս Ուվարովն ու Մասլեննիկովը. դրանք են կազմակերպել Վոլգայի շրջանի առաջադիմականների նախընտրական բիւրօն։

Ինչ վերաբերում է ապագայ պատգամաւորների անուններին, կարելի է ասել առանձին, որ հոկտեմբրեան պատգամաւորներ, ինչպէս Կլիւժեւն ու Զելլեօվը, ընտրվելու շանսերից օգտվում են։ Ընդդիմադիրներին ձայն տալու մտադրվող ընտրողներն իրանց ծրագիրները չեն թաքցնում։ Հաստատում են, որ Սարատովեան նահանգում առաջադիմականներն ընտրվելու ուժեղ շանսեր ունեն. վարչութիւնն այդ պատճառով վտանգ է տեսնում, որ Դումայում կարող են առաջադիմական պատգամաւորներ լինել։ Արխանգելեան նահանգից հաղորդում են, որ թէ գիւղացիները և թէ հոգևորականները, անձնաւորութիւններ ընտրելիս, մեծ ինքնուրոյնութիւն են ցոյց տալիս։ Ըստ երևոյթին հոգևորականութիւնը ընդդիմադիրներին պիտի ձայն տայ։

Կուսակցական ամենաուժեղ պայքար սպասվում է կազմակերպված ընտրողների կենտրոնում Տվերեան նահանգում, որը գտնվում է երկու մայրաքաղաքների՝ Պետերբուրգի և Մոսկվայի ազդեցութեան տակ։

Վարչութեան հաղորդածին նայելով, Տվերեան նահանգում ընտրողների տրամադրութիւնը խիստ ընդդիմադրական է։ Նահանգական ամբողջ ինտելիգենցիան երբէք չէ թաքցնում իր համակրութիւնը դէպի կադէտների պատգամաւորները, իսկ գաւառներում, տեղական ազնուականութեան մեծ մասը ցանկանում է նրանց։ Մի քանի մասերում՝ որոնք առաջ հոկտեմբրեանների կողմն էին բռնում, այժմ նկատվում է թեքումն դէպի առաջադիմականները, որոնք կադետների հետ համաձայնութեան են եկել։ («Բ. Ե.»)

ԴԱՏԱՊԱՐՏՎԱԾՆԵՐԸ

Հասարակական ամեն մի խաւ, ամեն մի դասակարգ իր գոյութեան ընթացքում ենթակայ է բարեշրջման։ Ժողովուրդը դիմում է բնութեան վեհ ալիքաման ուղիով առաջ և առաջ. դիմում են առաջ և հասարակութիւնները, դասակարգերը։ Բանւորները իրականացնում են ութ-ժամեայ աշխատանքի օրը, գիւղացիները առաջ են մղում հողային և այլ հարցեր, բուրժուաները իրանց երկաթանման որոշումները կռում-կոփում և հաստատում են իրանց դաշնակիցների հետ միասին և այլն և այլն. միայն կայ մի դասակարգ, մի աչքի ընկնող դասակարգ, որը դեռ ևս խարխափում է հնութեան փոշիների մէջ և որի մի մասը ենթակայ է հալածման, նախատինքի և արհամարհանքի։ Այդ դասակարգը այրի քահանայութիւնն ու կուսակրօն հոգևորականութիւնն է։ Ապրում են այրի քահանաները գիւղերում և քաղաքներում. քաղաքի քահանան որոշ չափով ենթակայ է զրկանքների, ատրացման. հասարակութիւնը նրան արհամարհում, բամբասում է. բայց նա, քաղաքի այրի քահանան, ունի յարմարութիւններ... Կարողանում է օգտվել կեանքից ծածուկ, գաղտագողի, որովհետև ապրում է քաղաքում, շրջանը մեծ է, ամեն ինչ պարփակում է. յամենայն դէպս, ինչ էլ լինի, նա ենթակայ է հոգեկան տանջանքի և խղճի խայթման։ Իսկ գիւղի այրի քահանան, օ, անտանելի և սարսափելի է նրա դրութիւնը, նրա գլխին են թափվում գիւղական գազան վամպիրների պողպատեայ գաւազանի հարուածները։

Այո, նրան մենք մեղադրում ենք թէ բարոյապէս և թէ մարմնապէս, մենք, մեզ հասկացող համարողներս, նրանցից պատիւ պահանջողներս։ Ինչու համար թոյլ չը տալ նրանց անել այն, ինչ մենք ենք անում, ինչ ոչ ոքի չի վնասի, ոչ ոք դրանից չի տուժի, մի բան, որ բնութիւնը սահմանել և ստիպում է անել այն՝ առաջադիմութեան համար։

Այս յօդուածը գրելուս պատճառը եղել է մի դէպք, որը կատարվել է շատ անաստուած, վայրենաբար և որը անչափ ցաւ ու ափսոսանք պատճառեց ինձ։

Ախալքալաքի գաւառի Բալխօ գիւղի քահանայ Յովհ. Տէր-Մինասեանը, որը մի կրթված ու զարգացած, վերին աստիճանի մաքուր, բարոյական ու ազնիւ մարդ է, հրաժարվելով կեանք քայքայող բոլոր կեղտոտ ճանապարհներից՝ բացարձակապէս կողակցում է մի այրի կնոջ հետ, որը մի քանի ամսից յետոյ մահանում է, և, ով սատանայ, սկսվում է մի աղմուկ, հրդեհ մի շարք մարդկանց կողմից, որոնք խնդիր են ներկայացնում հանգուցեալ Մատթէոս Բ. Կաթողիկոսին և խնդրում պատժել անհաւատին, ժողովրդին յուսահատեցնողին. իսկ հանգուցեալ Վեհը, լինելով հին և խստաբարոյ մարդ, անսովոր՝ նման դէպքերի, հրամայում է պատժել հերետիկոսին, կարգալոյծ անել. և նա պատժվեց, զրկված մարդկային պատւից, արժանաւորութիւնից. ընկղմվեց խոր մտորումների մէջ, մաշվեց հոգեպէս և մարմնապէս և ահա երկու տարի է՝ նստած մութ սենեակում չէ ուզում տեսնել զազիր մարդկանց երեսը. մարդիկ նրա համար զզուելի են դարձել... Իսկ կուսակրօն հոգևորականների մասին խօսելը նոյն իսկ աւելորդ է. նրանք անհետ մատնված են կորստեան, նրանք հէնց իրանց ս. աստիճան ընդունած օրից մեռած են, արհամարհված։ Համառօտ կերպով գրելով այդ մասին և միևնոյն ժամանակ հնարաւոր չը համարելով օրաթերթում ընդարձակութեամբ պարզել այս խնդիրը, թողնում եմ աւելի յարմար առիթի և ժամանակի։ Իսկ առայժմ հրաւիրում ենք նորօծ Հայրապետի ուշադրութիւնը այս հարցի վրա։ Հարկաւոր է վերջապէս ջախջախել այդ կապանքները, բարենորոգել ամեն ինչ ըստ պահանջման ժամանակի ոգու, թոյլ տալ մարդկանց զարգանալ առողջ կերպով, օգտվել կեանքից։

Հաւատացած ենք, որ Գէորգ V Կաթողիկոսը իր ծրագիրների մէջ կը մտցնէ և այս ազատարար հատուածը։ Ուսանող

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Բռնմնեղի ոճրագործութիւն

Զաքաթալա, 15 օգոստոսի

Ամսիս 11-ի երեկոյեան դէմ քաղաքիցս մի քանի վերստ հեռաւորութեան վրա գտնվող Ալասկեար գիւղի մզկիթում աղօթքի ժամանակ, որին ներկայ են եղել բաւական մարդիկ, հրացանի մի գնդակով գետին է գլորվել նոյն գիւղի բնակիչ Հաջի-Մահմէդ Սուրխայ-օղլին։ Սպանողը կամ սպանել տուողը, ասում են չար լեզուները, նոյն գիւղացի Հաջի Կասում Կօջա-օղլին է, որը կալանաւորված է։

Մեր շրջանում 5 տարեկանից մինչև խոր ծերութեան հասնելը լեզգիի կամ թուրքի վրայից անբաժան է դաշոյնը, էլ չենք խօսում միւս զէնքերի մասին. նոյն իսկ մօլլաներն ու հաջիները 2—3 արշինանոց դաշոյն են կապում և մի գեղեցիկ օր իրանց «հունարը» ցոյց տալիս ամենաչնչին վէճի, վիրաւորանքի ժամանակ անգամ։

Սօյզադէ

Ուսումնարանի եւ քահանայացուի հարցերը

Ցղնա (Գողթ գաւ.), 15 օգոստոսի

Ամսիս 13-ին հոգաբարձութեան հրաւէրով տեղիս հասարակական ժողովարանի դահլիճում կայացաւ ծխ. ժողով, որին նախագահում էր Կարապետ եպ. Տէր-Մկրտչեանցը։

Սրբազանը մի քանի խօսքերով բացատրեց հասարակութեանը ուսումնարանի և ուսման բարերար ազդեցութիւնը, և ապա առաջարկեց հասարակութեանը մի նուիրատուութեան մատեան, որտեղ ամեն ոք կարող է արձանագրել ըստ կարողութեան իր նուէրը թէ կանխիկ դրամով և թէ անձնական աշխատանքով՝ նորակառոյց ուսումնարանի շէնքին։

Անցեալ տարի Մոսկվայում վախճանված տեղացի յայտնի հարուստ Բունիաթեանը նուիրել էր տեղիս նորակառոյց ուսումնարանի ֆօնդին 10,000 ր., այն պայմանով որ մինչև երեք տարի ձեռնարկվի ուսումնարանի հիմնարկութեան։ Այդ գումարի տոկոսներով օգտվելու է ընդմիշտ ուսումնարանը։

Հասարակութիւնը հէնց այդ ծխ. ժողովում մի ժամվայ մէջ ստորագրվեց մօտաւորապէս 700 ր.։

Պէտք է ասած, որ այդ նպատակի համար նոյնիսկ հանգանակութիւն է եղել թէ Մոսկվայում, Բագւում և թէ միւս քաղաքներում ցղնացիների մէջ, և, ինչպէս լսում ենք, մինչև այժմ հաւաքված է 4000-ից աւելի մի գումար։ Յուսալի է, որ այս աշնանը սկսած լինեն այդ բարի ձեռնարկութեան հիմքը։

Ուսումնարանի հարցից յետոյ՝ երէցփոխ հոգաբարձու Գ. Մովսիսեանը դիմեց հասարակութեանը, առաջարկելով որ այսքան տարի թափուր մնացած քահանայի պաշտօնի համար ընտրեն իրանց միջից քահանայացու մի անձնաւորութիւն։

Երկար վիճելուց յետոյ առաջարկեցին Սուքիաս Տէր Նիկողոսեանին, որին քիչ-շատ ծանօթ է եկեղեցական արարողութեանը, բայց ցենզ չունենալուն պատճառով Տէր-Նիկողոսեանը խնդրեց կազմել մի համախօսական ու տալ իրան ժամանակ՝ գնալ պատրաստվելու և քահանայութեան ցենզ ձեռք բերելու։ Ժողովը միաձայն ընդունեց այդ առաջարկը։ Տէրնեմ

Մի նոր բաղդագուշակ-խաբեբայ

Մեծ-Ղարաքիլիսա, 17 օգոստոսի

Գիւղից 5 վերստ հեռաւորութեան վրա գտնվող Ղշլաղ գիւղում դուրս է եկել մի երիտասարդ նոյն գիւղացի և տարիներ է՝ ամբողջ այս շրջանի և այլ գիւղացիներից զատ՝ նաև հարստահարում, հաւատն է շահագործում ամարանոցաւորների, որպէս ձեռքի նայող, բաղդ գուշակող։

Գուշակող Ստեփանը, որին նաև տեղացիները «սուրբ» մակդիրն են աւելացրել, որպէս ասացի, շահագործում է համարեա ամեն տիպի մարդու, և այսօր նրա տունը դարձել է մի սրբատեղի. գալիս են նրա մօտ և կորուստ ունեցողները, և հիւանդի տէրերը, և անաջող գործ ունեցողները, և հեռաւորի սպասողները, և սիրահարվածները, և այլն։ Իսկ «սուրբ Ստեփանը» նրանց տուած զանազան «աջահամբոյրները» ստանալով և մի բան ասելով ճանապարհ է դնում։ Չէ որ շատ միամիտներ աւելի շատ իրանք են իրանց գլխից անցածը պատմում, որի հիման վրա էլ խաբեբան գուշակում է։

«Սուրբ Ստեփանը» այնպիսի ընդհանուր բառերով է խօսում, որ համարեա ամեն մարդ էլ նման անցեալ է ունեցել և այլն։

Ի. Հովուեանց

Խուզարկութիւն

Գորիս, 15 օգոստոսի

Երէկ ոստիկանութիւնը խուզարկութեան ենթարկեց «Սասուն» տպարանը և գրավաճառանոցը։ Մանրազնին և երկար խուզարկութիւնը ոչ մի արդիւնք չը տուեց և հակաօրինական ոչինչ չը գտնվեց։

Վերցրել են մի-մի օրինակ «Ծաղկեփունջ» երգարանից և «Գարուն» ալմանախից։

Համարագրել են և կնքել Սազանդարեանի կազմած «Նոր-քնար» երգարանը, որի երկու տպագրական թերթը արդէն լոյս է տեսել և տպագրութիւնը աւարտվելուց յետոյ համեմատվելու է համարագրած ձեռագրի հետ։

Խուզարկութեան են ենթարկվել նաև տպարանատէր Գէորգեանի և Փարսեանի բնակարանները, ուր նոյնպէս ոչինչ չէ գտնված և ոչ ոք չէ ձերբակալված։ Ս-եան

Մի ոճրագործութիւն եւ ամարանոցաւորների մեկնումը

Շուշի, 15 օգոստոսի

Կիրակի, ամսիս 12-ին, երեկոյեան ժամը մօտ 10-ին, քաղաքիս զբօսարանում կատարվեց մի ծանր ոճրագործութիւն։ Ճեմելիքներից մէկում սպանվեց մի հայ երիտասարդ՝ Մ. Բաբայեան անունով։ Իրողութիւնն այսպէս են պատմում։ Մի քանի տղաներ մի ինչ-որ հարցի համար վիճում են յիշեալ երիտասարդի հետ և ապա բաժանվում։ Կէս ժամ անցնելուց յետոյ՝ նորից գալիս են և ատրճանակի մի քանի հարուածներով ծանրապէս մահացու կերպով վիրաւորում նրան։ Ոճրագործները անմիջապէս հեռանում են զբօսարանից։ Հասնում է ոստիկանութիւնը, վիրաւորին տանում «Ժամհարեան եղբայրների» մերձակայ հիւանդանոցը բժշկական օգնութիւն հասցնելու, ուր նա առանց ուշքի գալու աւանդում է հոգին։ Այդ ոճրագործութեան սարսափը տարածվում է ամառային ակումբանոցում և զբօսավայրում ու ծաղկանոցում գտնվող և զբօսնող ժողովրդի վրա։ Ամեն մէկը աճապարում է տուն հասնել, ստուգելու՝ թէ արդեօք սպանվողը իրանց ազգականներից հո չէ։ Այդ իրարանցման մէջ լսվում էին կանանց և երեխաների լացն ու շիվանը։ Միւս օրը ոստիկանութիւնը ձերբակալեց կասկածելի մի քանի երիտասարդների, բայց որոշ յայտնի չէ, թէ արդարև նրանք են իսկական ոճրագործները թէ ոչ։

Քաղաքում սկսվել է զով եղանակը և ամարանոցաւորները սկսել են հեռանալ մեր քաղաքից։

Օր. Աստղիկ Տէր-Յովհաննիսեան

ԲՈՐԺՈՄԻ ԳՆԱՑՔԻ ԽՈՐՏԱԿՈՒՄԸ

Մի քանի մանրամասնութիւններ

Գորի, 17 օգոստոսի

Այսօր առաւօտեան կայծակի արագութեամբ լուր տարածվեց, որ Գորիի երկաթուղու կայարանից կէս վերստ հեռաւորութեան վրա, դէպի Թիֆլիս, Բորժոմից եկած ամառային գնացքը խորտակվել է։ Պէտք էր տեսնել, թէ ինչպէս ամբողջ ժողովուրդը շարան-շարան գնում էր դժբաղդութեան վայրը։

Երբ հասանք դժբաղդութեան տեղը, տեսանք հետևեալ պատկերը։

Գնացքին փոխանակ ուղիղ ճանապարհ տալու դէպի Թիֆլիս՝ սխալմամբ թողել էին մի ուրիշ գծի վրա, որը տանում է դէպի փակ վերջագիծը (տուպիկ) և երբ վայրաշարժը (պարովօզ) հասել է այդ տուպիկին, մի այնպիսի ոյժով է խփել նրան, որ հիմքից պոկելով ինքն էլ հետը գլորվել է ցած երեք սաժէն բարձրութիւնից։ Վայրաշարժին հետևող տէնդէրը շուռ գալով ընկած վայրաշարժի վրա՝ թափում է իր մէջի մազութը վայրաշարժի կրակի վրա, որտեղից առաջանում է սարսափելի հրդեհ։ Տէնդէրին հետևող բագաժի վագոնը բարձրանալով առաջի երկուսի վրա՝ բոլորովին այրվել էր իր մէջը եղած բագաժով։ Այդ բագաժի վագոնից մնացել էին միայն երկաթի մասերը, ուրիշ ոչինչ։ Բագաժի վագոնին հետևող երրորդ կարգի վագոնը բաւականին վնասվել է։ Վայրաշարժի վրա աշխատող երեք ծառայողները, իրանց կանգնած տեղերից չը կարողանալով ժամանակին ցած թռչել և ազատվել, մնացել էին տէնդէրի և պարովօզի մէջ տեղը կոտրված և փշրված երկաթների մէջը պլլված դրութեան մէջ։ Մեքենավար Դուբինինը և իր օգնական Կոնդրատենկօն երկուսն էլ այրվել էին։ Միայն նրանց ոսկորներն էին մնացել։ Իսկ երրորդ ծառայողը, այսինքն հնոցպանը (կաչեգար) չէր երևում. հաւանօրէն նա էլ ջարդվել և այրվել է։

Պատկերը սրտաճմլիկ էր։ Բարեբաղդաբար գնացքը նոր է դուրս եկած եղել կայարանից և շատ կամաց է գնալիս եղել, իսկ եթէ արագընթաց սլանալիս լինէր, ոչ մի ճանապարհորդ չէր ազատվի։

Կրակը այնքան դժոխային է եղել, որ նրա մէջ այրվողներին այնքան ճանապարհորդներից ոչ ոք չի կարողացել մօտենալ, թէև մօտենային էլ՝ ոչինչ չէին կարող օգնել, որովհետև այրվածները այնպիսի տեղ են մնացել, որ այնտեղից նրանց ոսկորները մինչև անգամ չէր կարելի հանել։

Թէ ով է այս դժբաղդութեան պատճառը, դեռ ևս յայտնի չէ։ Մ. Մարութեան

ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՍՂՆԱԽԻՑ

Սղնախ, 16 օգոստոսի

Անցեալներս հաղորդել էինք, որ Կ. Հ. Բ. Ը. խորհուրդը յանձնարարեց Ցարսկիէ-Կոլօդցիի հիւղին աշխատել Մաչխաանի գիւղում բանալ հայոց դպրոց Լևոն Մելիք-Նուբարեանի նպաստով։ Այս գործի առթիւ վարչութեան անդամ-քարտուղար Յակոբ քահանայ Գրիգորեանը նորերս շրջեց Մաչխաանի շրջակայի գիւղերը, ցուցակագրեց ժողովուրդը, կազմեց համախօսական և ուղարկեց խորհրդին։

Վիճակագրութիւնից երևաց հետևեալը։ Այդ գիւղերում բնակվում են. Բօղբխսէվի՝ 3 տուն հայ, Ջուգաանի՝ 8 տուն, Տիբաանի՝ 20 տուն, Մերզաանի՝ 8 տուն, Վերին-Մաչխաանի՝ 4 տուն, Ներքին-Մաչխաանի՝ 12 տուն։ Ընդամենը 6 գիւղերում բնակվում են 55 տուն հայեր։ Այդ գիւղերի կենտրոնն է Ներքին-Մաչխաանի գիւղը, որտեղ ծրագրված է բանալ հայոց դպրոց։ Դպրոցական հասակի երեխաները 42 հոգի են երկու սեռի 7—14 տարեկան։

Գիւղացիները համախօսականով ստորագրեցին մօտ 100 րուբլի յօժար կամքով։ Եթէ փողը պակասի, նրանք յօժար են պակասը լրացնել։ Դպրոցը բանալուց յետոյ կը ստեղծվեն նոր աղբիւրներ՝ թոշակ, մոմավաճառութիւն, ներկայացում-երեկոյթ և այլն։ Լ. Մելիք-Նուբարեանը պահանջում էր, որ գիւղացիներն ևս մասնակցեն ծախսերին, որպէսզի սովորեն ինքնագործունէութեան։ Սղնախի համար նա առաջարկում էր տուրք 75 կ.—1 ր. 50 կ. հոգուց. գիւղացիներն աւելի ստորագրեցին, ուրեմն նրա սկզբունքը պահպանված է։ Ցանկալի է, որ Մելիք-Նուբարեանը համաձայնութիւն յայտնի, և սեպտեմբերից բացվի դպրոցը։

Սիմէօն Մելիք-Նուբարեանը նուիրեց Նասօմխարբի վանքին, ի յիշատակ իր հանգուցեալ ծնողների, մախմուրի վարագոյր, բեմի համար կարմիր մահուդ և բեմի երկու մեծ աշտանակներ կերոններով։ Ստեփան Ամիրխանեանը նոյն վանքին նուիրեց արծաթէ թաս՝ զանձանակի համար և թաշկինակ՝ աւետարանի համար։ Քրիստափոր Փարեմուզեանը ծածկել տուեց Նասօմխարբի գմբի կտուրը, ծախսելով 73 րուբլի։ Այս փողերից մօտ 50 ր. անցեալ տարի հանգանակվեց. պակասում է մօտ 23 ր.։

Վարդան Միրզոյեանը ս. Կարապետ եկեղեցու բակում իր ծախսով կառուցեց 2 կոկիկ սենեակ ուխտաւորների համար։ Դրա կողքին ծրագրված է շարունակել կառուցել դպրոցական շէնութիւն հանգուցեալ Նիկողայոս Ղօրղանեանի նուիրած փողերով։

Հայոց դպրոցը վերջապէս ազատվեց պարտքից։ Մոմավաճառութիւնը տրվեց կապալով տարեկան 500 րուբլով։

Սղնախի հասարակութիւնը վճռեց կրճատել քահանաների թիւը։ Յարութիւն քահ. Տէր-Նիկողոսեանին իր ծխով ս. Գէորգ եկեղեցուց տեղափոխեցին ս. Կարապետ մայր եկեղեցի։ Ս. Գէորգ եկեղեցում թողեցին միայն մէկ քահանայ։ Այս միտքը մենք պաշտպանել ենք «Մշակում» դեռ ևս 1898 թ.։

Սղնախի ջրմուղը բոլորովին պատրաստ է։ Ջուրը ծախվելու է 7 տեղերում, որի համար շինված են բուդկաներ. 2 դոյլը ծախելու են 1 կոպէկով։ Օգոստոսի 1-ից սկսեցին ջուր մատակարարել քաղաքին. երկուշաբթի ձրի էին տալիս, 14-ից փողով են տալիս։ Ջրի աւազանը գտնվում է վրաց ս. Ստեփանոս եկեղեցու մօտ, որտեղից ջուրը գնում է քաղաքի բոլոր կողմերը։ Աղբիւրներից իրաւունք չը կայ ջուր ծախել։

Քանդվող ձորակը ամրացվեց։ Նրա վրա կառուցվեց փայտէ կամուրջ։ Կարծում են, որ կամուրջը չի դիմանայ, քանի որ տակին հողը հաստատ չէ և քանդվում է։

N. N.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Օգոստոսի 19-ին, կիրակի օրը, առաւօտեան ժամը 11 և 23 րոպէին արտակարգ գնացքով վերադարձան Նորին Կայսերական Մեծութեան Կովկասի Փոխարքայ Կոմս Ի. Ի. Վօրօնցօվ-Դաշկօվը և կոմսուհի Ե. Ա. Վօրօնցօվա-Դաշկօվան։ Կայարանը զարդարված էր ծաղիկներով ու կանաչներով։ Դիմաւորելու էին եկել պաշտօնատար անձինք և հոգևորականութեան և այլ խաւերից ներկայացուցիչներ։

◆ Օգոստոսի 18-ին գիշերը ոստիկանութեան խուզարկու բաժանմունքը Թիֆլիսում ձերբակալել է Սարգիս Ալէքսանդրովիչ Օթարովին և Նիկօլայ Կվացիեվիչ Կվանտալիանիին, որոնք հետախուզվում էին մեղադրվելով 1906 թւին կովկասեան երկաթուղիների Երևանի գծի պօստատար վագոնից փողային ապահովված 148,000 և 60,000 ր. ծրարներ յափշտակելուն մէջ։ Ձերբակալվածները կուղարկվեն Երևան և կը դատվեն այնտեղի շրջանային դատարանում։

◆ Օգոստոսի 16-ին Թիֆլիսի քաղաքային վարչութեան տնտեսական մասնաժողովի նիստում մթերամասի կառավարիչ Ն. Մ. Կարա-Մուրզան կարդացել է իր զեկուցումը։ Մասնաժողովը ընդունելով զեկուցումը՝ ներկայացրել է վարչութեանը ի հաստատութիւն։ Այդ զեկուցումից, ի միջի այլոց, երևում է, որ հիւանդանոցների մթերքների ընդհանուր կարիքը հաւասարվում է 46,803 րուբլու։ Նախահաշւով պէտք է պատրաստել միս՝ 3077 պուդ 14,762 րուբլու, հաց՝ 6738 պուդ 10,370 րուբլու, կաթ՝ 5580 ր., ձու 78,700 հատ՝ 1900 ր.։ Այդ մթերքների մատակարարումը վճռված է յանձնել յատկապէս այդ մթերքները վաճառող անձանց։ Վառելիքի հարցը առայժմ պարզված չէ վերջնականապէս. հարկաւոր տեղեկութիւնները հաւաքվում են քաղաքային հաստատութիւններից։

◆ Քաղաքային ապաստարաններն ու տները կառավարող մասնաժողովը յանձնել է վարչութեան անդամ Մ. Ն. Աթաբէգեանին բանակցութիւն վարել տանտիրուհի Ե. Սօբէստանսկայայի հետ՝ վերջինիս տունը ապաստարանի համար առնելու։ Մասնաժողովը գերադաս է համարել սեփական տուն գնել, քան թէ վարձ տալ։

◆ Մանթաշեանի առևտրական դպրոցին կից, համաձայն հոգաբարձական որոշման, ներկայ ուսումնական տարվանից բացվում է նախակրթական բաժանմունք։ Այդ բաժանմունքում ընդունվելու են 7—10 տարեկան տղաներ, առանց քննութեան։ Աշակերտների լրացուցիչ քննութիւնները նշանակված են օգոստոսի 20-ին, իսկ ընդունելութիւնները բոլոր դասարանները օգոստոսի 24-ին։ Ուսումը կը սկսվի սեպտեմբերի 1-ին։

◆ Օգոստոսի 16-ին, Կարսում, տեղացի Արմենակ Աւետիսեանը ապրանքատար կայարանից ստանալով իր բերել տուած աւտոմօբիլը՝ կայարանից ուղղակի, հինգ ուղևորների հետ միասին, գնում է դէպի Սարիղամիշի շօսսէն զբօսնելու։ Քաղաքից մի կէս վերստ հեռանալով, շօֆֆերը պտոյտի մօտ չէ կարողանում կանգնեցնել բոլոր ոյժով փախչող աւտոմօբիլը, և նա իր բոլոր ուղևորներով միասին նետվում է Կարսաչայ գետի ամենախոր տեղը։ Խեղդվում է աւտոմօբիլի տիրոջ 15 տարեկան եղբայրը, որին մինչև այժմ չեն գտել, մնացեալ ուղևորները ազատվել են հրաշքով, իսկ աւտոմօբիլը դեռ ջրի մէջն է։

◆ «Վակտ» Թուրքերէն լրագրի մէջ Աբդուլլայէվը յայտնում է, որ անհրաժեշտ է, որ մահմեդական կանայք ունենան իրանց յատուկ թերթը, ուր քննութեան առնվէին բացառապէս մահմեդական կնոջ վերաբերող հարցերը, ինչպէս՝ դաստիարակութեան և կրթութեան, նրանց ընտանեկան-հասարակական դրութիւնը բարւոքելու և այլն, որովհետև Թուրքերէն հրատարակվող թերթերը չեն կարողանում բաւարարել և արդի իրականութեան նոր պահանջները ցոլացնել։

◆ Թիֆլիսի տղ. 6-րդ գիմնազիայում վերաքննութիւնները նշանակված են 21-ից մինչև 28-ը, իսկ ընդունելութեան քննութիւնները նախապատրաստական և 1-ին դասարաններում օգոստոսի 23—25-ը։

◆ Խօջիվանքի մօտակայ փողոցների բնակիչները ձայնաւոր Ս. Ա. Գալստեանի միջոցով խնդիրք են ներկայացրել քաղաքային վարչութեանը՝ խնդրելով իրանց մասում ջրբաժան կռան դնել, հակառակ դէպքում խնդրատուները միջնորդում են գոնէ, ջրանցքի գիծը տանել նրանց տների բակերը։

◆ Այսօր, Մուշտայիդի այգում, Խարփուխի վրաց Թատերասիրաց խմբի զբօսանքի վերջին օրն է։ Սկիզբն է երեկոյեան ժ. 5 և կէսից։

◆ Վրիպակ.— Հայոց Դրամատիկական Ընկեր. մրցանակաբաշխական յայտարարութեան մէջ սպրդել է հետևեալ տպագրական սխալը. տպվել է՝ «Ցանուն տ. Մ. Մակաբեանի՝ լաւագոյն պիէսի համար 50 րուբ.», պէտք է լինէր՝ «150 րուբլի»։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ. ԳԵՂԱՐ.

ԳԱՒԱՌԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

Դիլիջան, 16 օգոստոսի

Ամսիս 8-ին տեղիս ակմբում Խուդադեան որբանոցի սանուհիներն օր. Շ. Քեանպարեանի ղեկավարութեամբ խաղացին օր. Վ. Նալբանդեանի «Սիրոյ բանալին»։

Թիֆլիսի հայ մամուլն իր ժամանակին բաւական երկար խօսեց այս փէերիայի մասին։

Ներկայացման երաժշտական բաժինը և փէաների տեսարանը բաւարար կարելի է համարել։

Գալով խաղին՝ առաջին մասը թոյլ անցաւ, փէաների տեսարանը՝ աջող։ Բաւարար էին միայն օր. Զաուշեան և օր. Սեբովբեան, գոհացուցիչ՝ օր. Մելիքեան։

Ամսիս 10-ին դերասան Անդրանիկի բենեֆիսին դերասանական ընկերակցութիւնը խաղաց Շիլլէրի «Աւազակները», որ բաւականին սահուն անցաւ։

Իսկ ամսիս 15-ին դերասան Միրաղեանի բենեֆիսին խաղացին «Ուխտվածներ» և «Բայղուշ», որ աջող անցաւ։ Աւսիր

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Սղնախ, 15 օգոստոսի

Իմ եղբայրը, Կոստանդին Մելքոյեան Ցարութիւնեանց (նոյն և Ղուլեանց) մօտ 30 տարի բնակվում էր Անդրկասպեան երկրում։ Երրորդ տարին է, ինչ նրանից նամակ չեմ ստանում։ Մասնաւոր կերպով տեղեկանում եմ, որ նա վախճանվել է Զարջույ քաղաքում։ Խնդրում եմ եղբօրս ճանաչողներին յայտնել լրագրով, թէ ճիշդ վախճանվեց եղբայրս, երբ և թողեց արդեօք որևէ գոյք։ Նա ամուրի էր, մօտ 70 տարեկան, սղնախեցի։

Ծղալօբ Ցարութիւնեան

—

Աբասթուման, 11 օգոստոսի

«Մշակի» № 176-ի գաւառական տեղեկութիւնների բաժնում Նորեկը պարսաւում է ճեմարանաւարտ Մինաս ք. Աղնաւուրեանի «իրաւասութեան սահմանից դուրս գալը»։

Բայց ահա իրողութիւնն իր պարզ մերկութեամբ։

Յուլիսի 1-ին Մ. ք. Աղնաւուրեանն իր գիմնազիստ որդու հետ գալիս են Աբասթուման՝ հանգստանալու և բժշկվելու։

Աբասթումանի ծխ. հոգաբարձութիւնը, ի նկատի առնելով եկեղեցու աղքատ բիւջէն, հնարաւոր չէ գտնում ռոճիկով ժամանակաւոր քահանայ հրաւիրել, ուստի օգտվելով հայր Աղնաւուրեանի ներկայութիւնից խնդրում է նրան առանց ռոճիկի ամառվայ ընթացքում կիրակի և տօն օրերին պատարագ մատուցանել, բաւականանալով միմիայն օրինակատարութիւններից ստացած արդիւնքով՝ միաժամանակ խոստանալով հոգևոր բարձր իշխանութեան համաձայնութիւնը ձեռք բերել։

Տէր-հայրը սիրով ընդառաջ է գնում հոգաբարձութեան առաջարկին և համաձայնում վերոյիշեալ պայմաններին։

Հոգաբարձութեան դիմումը ինչ-ինչ պատճառներով ուշանում է, որով առիթ է տալիս Ախալցխայի հոգևոր կառավարութեանը՝ արգելելու վերոյիշեալ քահանայի պաշտօնավարութիւնը։

Հոգաբարձութիւնը կարգադրութիւնը ստանալուն պէս՝ դիմում է հոգևոր կառավարութեանը և խնդրում թոյլատրել տէր-Մինասին մինչև ամառվայ վերջը պաշտօնավարել։ Մերժողական պատասխան ստանալով, նոյն իմաստի հեռագրով դիմել է կօնսիստօրիային։

Իսկ ինչ վերաբերում է հոգևոր կառավարութեան կողմից Աղնաւուրեանից առաջ ուրիշ քահանայ նշանակելուն, միանգամայն անճիշդ է։

Հետաքրքրական է իմանալ, թէ ո՞վ է այն քահանան, որ նշանակված էր Աբասթումանում։

Ղազար Ղազարեան

ԿՈՉ

Ծօճկանի ամբողջ հասարակութեանը

Շատ ցաւալի է այն երևոյթը, որ մեր Ծօճկանի հասարակութիւնը մինչև օրս չը կարողացաւ ըմբռնել այն մի քանի հասարակական շատ կարևոր հարցերի էութիւնը, որոնց մասին ես քանիցս առիթ եմ ունեցել գրելու։

Այդ հարցերից մէկը մեր եկեղեցու խնդիրն է, որի քայքայումը մօտ է և կարօտ է նորոգման. երկրորդ՝ տեղիս ծխ. դպրոցի աննախանձելի վիճակի բարւոքման հարց և երրորդ՝ մօտակայ տեղից գիւղը աղբիւրներ բերելու խնդիրը։

Կանցնեն շատ երկար տարիներ, և մեր երկրագործ դասակարգին հազիւ թէ մէկ էլ վիճակվի հանդիպել այսպիսի՝ ամեն ինչով առատ մի տարու։ Ու մի՞թէ լաւ չէր լինի թողնել գիւղական այն վատ, վնասակար, քայքայող սովորութիւնը, որը մեր շինականներին հասցնում է ամենայետին չքաւորութեան։ Այդ կործանարար սովորութիւնը այն է, որ ցորեն, գարի փոխառութեան են հանում այնպիսի երբերի հետ, որոնք նրանց ոչ մի օգուտ հասցնել չեն կարող, և այդպիսով վատնում մեծ քանակութեամբ ցորեն, գարի. իսկ այդ միևնոյն անձնաւորութիւնները ծուլանում են բարեգործական նպատակով հաւաքվելիք 1—2 խան հացահատիկը տալ։

Ես այս փոքրիկ նամակովս գալիս եմ կոչ անելու Ծօճկանի բանիմաց դասին, սկսած քահանայից մինչև ամենայետին չքաւորը, որպէսզի նա մտածէ, որ ժամանակ է այժմ եկեղեցու և դպրոցի մասին հոգալու, և առանց առանձին խրախուսանքի սպասելու՝ աշխատի իր ունեցածից մաս հանել։

Եւ եթէ իմ այս առաջարկն այս տարի արձագանք չը գտնէ տեղացիների սրտում, մենք բացէ ի բաց ամենաթանգագին առիթը կորցրած կը լինենք մեր համայնական կուլտուրական պարտքերից ամենաանհրաժեշտը հոգալու։

Մեր եկեղեցին ունի մի որոշ գումար. թող մեր շինականներն աւելացնեն նրա վրա նաև իրանց հաւաքած մի քանի կոպէկ լուման, և ահա այդպիսով իրանց եկեղեցին յաւէտ ազատած կը լինեն քայքայվելուց, քանի դեռ ևս վաղ է։

Ծխ. դպրոցը չորս տարի գոյութիւն ունի մեզանում։ Այժմ՝ դրամի օժանդակութեան պակասելու պատճառով մի՞թէ պատուաբեր է որ մեր դպրոցը այսպիսի առատ տարուց յետոյ փակվի։

Ժամանակ է վերջապէս շատ լուրջ մտածելու վերոյիշեալ հարցերի մասին։ Այսուհետև էլ չէ կարելի ասել՝ հաց չունեմ, խեղճ եմ և այլն։ Եթէ այս տարի էլ անցնի, առանց որ մեր կողմից որևէ հոգածութեան արժանանան մեր յիշեալ կարիքները, ապա պարզ կը լինի ամենքի համար, որ մենք ծոյլ ենք և մեր օգտի համար ցաւել չենք ուզում, այլ բրթած ու պատրաստ բանի ենք ման գալիս։ Կայծօն Շքեղեան

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Հայոց պատրիարքին հեռագրում են Բիթլիսից, Վանից և Էրզրումից այն տեղերում տիրող անարխիայի, հայերի սպանութիւնների և թալանների մասին։ Իշխանութիւնները անգործունէութեան մէջ են։

◆ Կ. Պօլսից հաղորդում են, որ ալբանացիները պահանջում են կառավարութիւնից վերադարձնել իրանցից գրաւված զէնքերը և կազմակերպում են երկրի պաշտպանութիւնը ընդդէմ չերնօգորցիների։

◆ Բ. Դուռը 50,000 Թիւրքական ֆունտ նպաստ է յատկացրել Կօչանիկի ջարդի զոհերին։

◆ Թէհրանից տեղեկութիւն է ստացված, որ սարդար Ասադը հեռանում է մայրաքաղաքից և գնում է Հարաւային Պարսկաստան։

◆ Արդաբիլից հաղորդում են, որ օգոստոսի 11-ի կռւում շահսէվանները կորցրել են իրանց ամենալաւ կռւողներին և պարագլուխներին։ Պառակտումը սաստկացել է նրանց մէջ, մեծ մասը զէնքը ցած է դնում և հնազանդութիւն յայտնում ռուսներին։

◆ Ֆինլանդիայում երկաթուղային կայարանի կառավարիչ է նշանակված մի կին՝ Տօյկանդեր ազգանունով։ Այդպիսի պատասխանատու բարձր պաշտօնը կնոջ տալը առաջին օրինակն է ռուսական երկաթուղիների վրա։

◆ Ֆինանսների մինիստրութիւնը հաստատել է մայրաքաղաքի փոխադարձ վարկի ընկերութեան կանօնադրութիւնը։ Այդ ընկերութիւնը բոլորովին նոր տիպի է. նա փոխառութիւն տալիս է 9 ամիս ժամանակով և այն էլ փոխադարձ երաշխաւորութեամբ։ Ընկերութեան նպատակն է օժանդակել մանր ծառայողներին և պաշտօնեաներին։ Հիմնադիրները բարձրաստիճան պաշտօնեաներ են՝ սենատորներ և Պետական Խորհրդի անդամներ։

◆ Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը ներկայումս զբաղված է ուսումնարանական շրջանները նոր բաժանումների ենթարկելու աշխատանքների մշակումով։

◆ Աչքի առաջ ունենալով այն երևոյթը, որ ուսուցիչները հոգևոր դպրոցներից փախչում են դէպի աշխարհիկ դպրոցները, ռուսաց սինօդը վճռել է աւելացնել նրանց ռոճիկները։

◆ Կրեմէնչուգում խուլիգանները յարձակվել են «Приднѣпровскій Голосъ» թերթի խմբագիր Վիտլինի վրա և ծեծել նրան խուլիգանութեան մասին՝ արած նկատողութիւնների համար։

◆ Տերիօկում Հերցենշտէյնի գերեզմանի վրայից թափել և տրորել են ծաղիկները, իսկ գերեզմանաքարը ներկել կուպրով։

◆ Նէվայի ալիքները ափ են ձգել մի խորհրդաւոր առագաստանաւ «Զայկա» անունով։ Նաւի մէջ գտել են Պետերբուրգի և Շլիսսելբուրգի շրջակայքի քարտէզը, լուսանկարչական գործիք և մի տղամարդու հագուստ նստարանին կապած. Խուզարկու ոստիկանութիւնը քննում է այդ դէպքը։

◆ Վարշավայի դատաստանական պալատում մօտ օրերս քննվել է Զենստօխովայի պրիստաւի գործը, որը մեղադրվում է լեհական սօցիալիստական կուսակցութեանը պատկանելուն համար։ Պրիստաւը իւրաքանչիւր անգամ նախազգուշացրել է կուսակցութեանը խուզարկութիւններ կատարվելու մասին և նրանց ձեռքն է տուել պահնորդների ցուցակը։

◆ Պահնորդական բաժանմունքի տուած օրդերով, Կիէվում կալանաւորված են 20 հոգի։ Ասում են, որ նրանք բոլորն էլ պատկանում են անարխիստների կազմակերպութեանը։

◆ Պետրօկովի բանտում բանտարկեալները անկարգութիւններ են արել։ Անկարգութիւնները սկսվել են կանանց բաժանմունքում։ Ջարդ ու փշուր են արված կահ-կարասիները։ Կանչված զօրքերը վերականգնել են կարգը։ Զոհեր չը կան։

◆ Սև-ծովեան նաւատորմի հրամանատարը իր արձակած հրամանում կտրական կերպով արգելում է օֆիցերներին գիշերել քաղաքում։

◆ Խարկովում բացված է հաշտարար դատարան մանկահասակների համար։ Իր գործունէութիւնը նա կը սկսի մի քանի օրից յետոյ։

◆ Արխանգելսկում հիմնվում է «արբեցողութեան, հայհոյաբանութեան, շրջմոլիկների, ծխողների և այլ արատների դէմ մաքառող կամաւորների ընկերութիւն»։ Ընկերութեան անդամները պարտաւոր են անձամբ օրինակ լինել ուրիշների առաջ. խուսափել արբեցութիւնից, հայհոյանքներից, գործի դնել շրջմոլիկներին և մուրացկաններին, չը ծխել և բացատրել երիտասարդութեանը և երեխաներին ծխախոտի վնասակարութիւնը։

◆ Ունգարիայի Ֆերտոմայոր աւանում մօտ ժամանակներս հիւանդացել են բաւականաչափ մարդիկ. կասկած է ծագել, որ դա խոլերային համաճարակ է։ Մանրէազննական հետազօտութիւնը ցոյց է տուել, որ հիւանդացողները թունաւորվել են արաղից։

◆ Թիւրքաց կառավարութեան կարգադրութեամբ դադարեցված է «Ազատամարտ» թերթի հրատարակութիւնը՝ Կօչանիկի ջարդերի մասին գրած առաջնորդող մի յօդուածի համար։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌ. ԳՈՐԾ.)

18 օգոստոսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ 400 րուբլի տուգանքի է ենթարկված «Бирж. Вѣд.» լրագրի խմբագիրը իր թերթի օգոստոսի 15-ի համարում զետեղած «Գաւառական պատկերներ» յօդուածի համար։ Նոյնպէս և «Русск. Знамя» լրագրի խմբագիրը 500 րուբլով։

Հաստատված է այգեգործների համագումարի կանօնադրութիւնը, որը տեղի կունենայ 1913 թւի մայիսին, Պետերբուրգում։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ամառնային երթեւեկութիւն)

(Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ.—Արագ գնացքը № 2—10 ժ. 8 ր. առ., հասնում է Աղստաֆա 12 ժ. 30 ր., Գանձակ 2 ժ. 58 ր., Եւլախ 4 ժ. 29 ր., Հաջի-Կաբուլ 8 ժ. 7 ր. երեկ., Բագու 11 ժ. 13 ր. գիշ.։ **Պօստատար գնացքը** № 4—12 ժ. 10 ր. գիշ., հասնում է Աղստաֆա 3 ժ. 4 ր. գիշ., Գանձակ 6 ժ. 14 ր. առ., Եւլախ 8 ժ. 13 ր., Հաջի-Կաբուլ 12 ժ. 48 ր. ցեր., Բագու 5 ժ. 20 ր. ցեր.։ **Մարդատար գնացքը** № 6—2 ժ. 44 ր. ցեր., հասնում է Աղստաֆա 5 ժ. 34 ր., Գանձակ 8 ժ. 42 ր. երեկ., Եւլախ 10 ժ. 39 ր. գիշ., Հաջի-Կաբուլ 3 ժ. 21 ր. գիշ., Բագու 7 ժ. 38 ր. առ.։ **Խառն գնացքը** № 106 (III կամ IV կարգի վագոններով, երբ կարիքութիւն զգացվի)—4 ժ. 37 ր. գիշ., հասնում է Աղստաֆա 8 ժ. 44 ր. առ., Գանձակ 1 ժ. 5 ր. ցեր., Եւլախ 4 ժ. 13 ր. ցեր., Հաջի-Կաբուլ 11 ժ. 45 ր. գիշ., Բագու 5 ժ. 54 ր. գիշ.։

ԲԱԹՈՒՄ.—**Արագ գնացքը** № 11—10 ժ. 44 ր. գիշ., հասնում է Միխայլովօ 1 ժ. 40 ր. գիշ., Բաթում 8 ժ. 58 ր. առ.։ **Պօստատար գնացքը** № 3—9 ժ. 41 ր. ցեր., հասնում է Միխայլովօ 1 ժ. 59 ցեր., Բաթում 11 ժ. 36 ր. գիշ.։ **Մարդատար գնացքը** № 5—6 ժ. 36 ր. եր., հասնում է Միխայլովօ 10 ժ. 38 ր. գիշ., Բաթում 7 ժ. 26 ր. առ.։ **Խառն գնացքը** № 107 (III կամ IV կարգի վագոններով, երբ կարիքութիւն զգացվի) 6 ժ. 18 ր. առ., հասնում է Միխայլովօ 1 ժ. 32 ր. ցեր., Բաթում 4 ժ. 31 ր. գիշ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ.—**Պօստատար գնացքը** № $^{74}/_{75}$—12 ժ. 40 ր. գիշ., հասնում է Ղարաքիլիսա 7 ժ. 54 ր. առ., Ալէքսանդրօպօլ 11 ժ. 24 ր. ցեր., Էջմիածին 4 ժամ 40 րոպ. ցեր., Ուլուխանլու 5 ժ. 7 ր. ցերեկվայ (առանց Երևան մտնելու), Նախիջևան 9 ժ. 50 ր. եր., Ջուլֆա 11 ժ. 21 ր. գիշ., **Մարդատար-ապրանքատար գնացքը** № $^{78}/_{79}$ (միայն II և III կարգի վագոններով)—7 ժ. 8 ր. եր., հասնում է Ղարաքիլիսա 2 ժ. 18 ր. գիշ., Ալէքսանդրօպօլ 5 ժ. 56 ր. գիշ., Էջմիածին 11 ժ. ցեր., Ուլուխանլու 11 ժ. 26 ր., Երևան 12 ժ. 19 ր. ցեր.։ **Մարդ.-ապրանքատար** № $^{108}/_{109}$—11 ժամ 28 րոպ. ցեր., հասնում է Ղարաքիլիսա 7 ժ. 28 ր. եր., Ալէքսանդրօպօլ 11 ժ. 27 ր. գիշ., Էջմիածին 5 ժ. 40 ր. գիշ., Ուլուխանլու 6 ժ. 15 ր. առ., Երևան 7 ժ. 23 ր. առաւօտեան։

ԲՈՐԺՈՄ.—**Մարդատար գնացքը** № $^{7}/_{8}$—7 ժ. 58 ր. առ., հասնում է Գորի 10 ժ. 43 ր., Բորժոմ 1 ժ. 39 ր. ցեր., **Մարդատար գնացքը** № $^{9}/_{10}$—3 ժ. 5 ր. ցեր., հասնում է Գորի 5 ժ. 48 ր. ցեր., Բորժոմ 8 ժ. 41 ր. երեկոյեան։

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՍՆՈՒՄ

ԲԱԳՈՒԻՑ.—**Արագ գնացքը** № 1—9 ժ. 56 ր. եր., **Պօստատար գնացքը** № 3—8 ժ. 56 ր. առ.։ **Մարդատար գնացքը** № 5—5 ժ. 51 ր. ցեր.։ **Խառն գնացքը** № 107—4 ժ. 56 ր. գիշ.։

ԲԱԹՈՒՄԻՑ.—**Արագ գնացքը** № 12—9 ժ. 18 ր. առ.։ **Պօստատար գնացքը** № 4—11 ժ. 15 ր. գիշ.։ **Մարդատար գնացքը** № 6—1 ժ. 59 ր. ցեր.։ **Խառն գնացքը** № 106—3 ժ. 40 ր. գիշ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ.—**Պօստ. գնացքը** № $^{72}/_{73}$—7 ժ. 26 ր. առ., **Մարդատար-ապրանքատար գնացքը** № $^{74}/_{75}$—8 ժ. 33 ր. եր.։ **Մարդ.-ապրանքատար գնացքը** № $^{80}/_{81}$—12 ժ. 48 ր. ցեր.։

ԲՈՐԺՈՄԻՑ.—**Մարդատար գնացքը** № $^{7}/_{8}$—7 ժ. 8 ր. առ., **մարդատար գնացքը** № $^{9}/_{10}$—9 ժ. 8 ր. երեկոյեան։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՇՒԱՊԱՀԱԿԱՆ
ԿՈՒՐՍԵՐ
Գ. եւ Մ. ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆՑՆԵՐԻ
Թիֆլիսում (Նիկօլայէվսկայա փող. № 36, Վօրօնցովի արձանի մօտ)։
Մանրամասն տեղեկութիւններ տրվում են Կուրսերի գրասենեակը ամեն օր՝ երեկոյեան ժամը 4—7-ը։
(ա.օ.) 579. 25—8

Յ. Դաղբաշեանի
Ռուս-Հայ լիակատար բառարան գինը 8 ր.
Հայ-Ռուս լիակատար բառարան, գինը 6 ր.
Ռուսերէնի ձեռնարկ հայոց ուսումնարանների համար։ Այբբենարան և առաջին ընթերցարան, գինը 20 կոպ., Բ. տարվայ դասընթացք, գինը 40 կոպ.։
Դիմել՝ А. Дагбашяну. Въ Тифлисъ. Головинскій пр. 12.
609. 1—1

Վ. եւ ՍՏ. ՍՄԲԱՏԵԱՆՆԵՐԻ
ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶԸ
եւ **ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԸ**
միջնորդութիւն է յարուցել, ուր յարկն է, թոյլտւութիւն ստանալու սինեմատօգրաֆ ձեռք բերել և դասարանում աւանդելիք նիւթերը, կարելին չափ, ցուցադրել։ Երգերով շարժական խաղերը, Սօկօլի սիստեմով մարմնամարզութիւնը կը դրվի աւելի հաստատուն հիմքերի վրա։ Աչքի ընկնող տեղ կը բռնի նկարչութիւնը, որի համար հրաւիրված է փորձված և հմուտ ուսուցիչ։ Մայիսին քննվող 9 աշակերտ քննութիւնը աջող բռնեցին զանազան գիմնազիաներում։ Կայ 2 գիշերօթիկ տեղ։ Դասերի սկիզբը սեպտ. 1-ին։ Աշակերտների ընդունելութեան և պայմանների մասին կարելի է դիմել ամեն օր։ Սօլօլակ, փողոց Պասկևիչի, № 13.
(ա.օ.) 588. 5—4

Լոյս է տեսել (Գ. տիպ)
Մ. ՏԱՐԱԽՋԵԱՆԻ
ՁԵՌՆԱՐԿ
ԹԵԼԱԴՐՈՒԹԵԱՆ
— ԵՒ —
ԳՈՐԾՆԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ
(ռուսերէն տերմիններով)
Գինն է 15 կոպ.
Դիմել՝ Баку, Книжн. маг. «Посредникъ», Парапетъ և Թիֆլիսի «Գուտտենբերգ», «Գիր» և «Կենտրոնական» գրախանութներին։
(Ե. ու.) 595. 10—2

ԱԳԵՆՏ
Մ. Ա. ԳԱԺՕՆԻԱ
Ընդունում է ամեն տեսակ յայտարարութիւններ թէ տեղական և թէ մայրաքաղաքի լրագրների համար։
Հասցէն՝ 1) Միխայլովսկի պր., «Վէտցել» հիւրանոց, տելէֆոն **380**. 2) Վակէ, սեփ. տուն, Ազնուականների գիմնազիայի մօտ, տելէֆոն **925**.
(օ.մ.) 577. 5—5

Թէոդոսիայի Հայոց Աղքատախնամ Հոգաբարձութեան
ԿԱՐՈՒՋԵԱՆ ԱՐՀԵՍՏԱՆՈՑԻ համար հարկաւոր է աւարտման վկայականով
ՄԻ ՀՄՈՒՏ և ՓՈՐՁԱՌՈՒ
ՎԱՐՊԵՏՈՒՀԻ
Ռոճիկ ամսական 30 րուբլի, բնակարան և վառելիք։ Մանրամասն տեղեկութեան և վկայականի ներկայացման համար դիմել՝ Θеодоссія, Священнику Армяно-Григоріанской церкви Варданянцу.
(ա.օ.) 596. 4—4

Առևտրի և Արդիւնաբերութեան Մինիստր. տեսչութեան ներքոյ գտնվող
Տ. Մ. ՓԻԼՈՍԵԱՆԻ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ
ԿՈՒՐՍԵՐՈՒՄ
Թիֆլիս, Միխայլովեան պր. 24/2. Տելեֆոն № 976.
Տալիս են երկսեռ անձերին ամբողջական առևտրական կրթութիւն։
[illegible]
Տ. ՓԻԼՈՍԵԱՆ
(ե. կ.) 555. 0—9

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный